



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՔԻՆՈՎ. Գ. ՄԱՂԱՋԵԱՆ

ԲԺՅԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

12 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ



ԹԻՖԼԻՉ

Արագածից Մկ. Գարեհրատականցի, Գուշի փ. № 12.
1904



21 JUN 2010

20 JUL 2010

614
Մ-20
W


ԲԺ.-ՈՒՍ. Գ. ՄԱԳԱՍՅԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ե Ի

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

14202-57 17X



Թ Ի Յ Լ Ի Զ


Արագածից Մե. Մարտիրոսեանցի, Գուշկիկեան փող. № 12:
1904



0705 JUL 05

3483

ՄԱՐԿԱԿԱՆԱԿԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ



ԻՄ ԸՆՄՈՒՆՑ ԵՂԻՅՐՍ

ՎԱՂԱԹԱՌԱՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՂԱՔԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ՝

ԳԷՈՐԳ ՄԱՂԱՔԵԱՆ

Дозволено цензурою. 9 Апрель 1904 г. г. Тифлисъ.

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Վերջին տարիներս մեր ժողովրդական բժշկական գրականութիւնը՝ շնորհիւ գլխաւորապէս մեր յարգելի ընկերակիցների՝ բժ. Արծրունու և Բուգուղեանի այնքան հարստացել է, որ գրա մասին խօսելն անգամ աւելորդ է: Այժմս մենք մի շարք գեղեցիկ գրուածքներ ունինք, որոնք ծանօթացնում են հասարակութեանը զանազան հիւանդութիւնների, առողջապահական և այլ հարցերի հետ: Այս գրքոյկը տարբերվում է բոլոր այդ գրքերից իր նոր բովանդակութիւնով: Մեր նպատակն է եղել նկարագրել համառօտակի, թէ ինչպէս է ծագել բժշկականութիւնը, ինչպէս է նա զարգացել դարերի ընթացքում մինչև մեր օրերը, ինչ կարող է նա անել, կամ ինչ կարելի է պահանջել նրանից և այլն: Ահա մի շարք հարցեր, որոնք անկասկած չափազանց կարևոր են հասարակութեանը, որովհետև այդ ժամանակ միայն կը վերանան այն թիւրիմացութիւնները, որ այժմս ամեն մի քալափոխում ծագում են բժիշկների և հասարակու-

Թեան միջև: Պէտք է խոստովանենք, որ այնքան էլ հեշտ չէ՛ր՝ բոլոր վերոյիշեալ հարցերը ժողովրդականացնելը, թէև մենք ըստ չափու կարողութեան աշխատեցինք այդ անելու և կարգացողը գուցէ միայն տեղ-տեղ դժուարութիւնների հանդիպի: Սակայն հնայած դրան՝ մենք հաւաստի ենք, որ գրքոյկիս ընդհանուր բովանդակութիւնը հասարակութեան մեծամասնութեանը հասկանալի կը լինի, որով և մենք հասած կը լինինք մեր առաջադրած նպատակին:

Գ. ՄԱՂԱՔԵԱՆ

Բ Ժ Ծ Կ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵՒ

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

«Թիւիկը նրազ է, որ լոյս է տալիս՝
իմեր վառուելով»:

Գ Լ Ո Ւ Խ Ա

Բժշկականութիւն. — Ժողովրդական բժշկականութիւն:

Մարդուս համար ո՛չ մի բան այնքան թանկ չէ աշխարհումս, որքան առողջութիւնը: Մեր կեանքը երկար չէ և քանի որ մարդկութիւնն էլ վաղուց արդէն հաշտուել է այն մտքի հետ, թէ մանր անխուսափելի է, ապա ուրեմն աւելի բնական և հասկանալի է նրա ցանկութիւնը՝ յետաձգել ըստ կարելւոյն անհատական գոյութեան ընդհատումը:

Ամենքս էլ անյաղթելի հակումն ունինք դէպի կեանքը. ուզում ենք առողջ լինել, որովհետեւ առողջութիւնը բաղդաւորութիւն է. նա մեր գործունէութեան և ձգտումների առաջին և անհրաժեշտ պայմանն է:

Հարստութիւնը, գեղեցկութիւնը և այլն այն ժամանակ միայն նշանակութիւն ունին, երբ մարդ առողջ է. վասնզի «հիւանդի ինչին է պէտք ոսկէ լազանը, որի մէջ արիւն պէտք է թքէ»:

Անկասկած հիւանդութիւնը միշտ գոյութիւն է ունեցել աշխարհումս, իսկ հիւանդը միշտ կարօտ է եղել օգնութեան: Ահա ինչու բժշկականութեան *) սկիզբը պէտք է մարդկութեան սկիզբը համարել:

Հեռաւոր անցեալում հիւանդի շրջապատողները փորձում էին զանազան միջոցներով թեթևացնել հիւանդի տանջանքները: Սկզբում նրանք գլխաւորապէս օգնութեան էին հասնում աւելի հասարակ դէպքերում. օրինակ՝ երբ արիւնահոսութիւն էր պատահում, աշխատում էին ընդհատել արիւնը.

*) Ամենից առաջ պէտք է զարգանային և հարկէ բժշկական միջոցները—բժշկութիւնը:

դժուար ծննդաբերութեան ժամանակ աշխատում էին այս կամ այն կերպով հեշտացնել երեխայի աշխարհ գալը և այլն: Միւս կողմից ինքը հիւանդը բնագոյմամբ այս կամ այն միջոցին էր դիմում, որպէսզի թեթևացնէ իր տանջանքը և այդ ցոյց էր տալիս շրջապատողներին, թէ նրանք ինչ են անելու: Օրինակ՝ ձեռը կամ ոտը կոտրելիս, հիւանդն անկասկած աշխատում էր անշարժ պահել վնասուած անդամը, որից հեշտ էր ենթադրել, թէ հարկաւոր է կապել, որպէսզի ըստ կարելոյն անշարժ մնայ. կամ հիւանդը բնագոյմամբ շօշափելով ցաւած տեղը, գալիս էր այն համոզմունքին, թէ հարկաւոր է սրորել—մերսել:

Աւելի դժուար էին ներքին հիւանդութիւնները: Այստեղ հարկաւոր եղան երկար դիտողութիւններ և փորձեր, նախքան զանազան միջոցների երևան գալը: Այստեղ ամենից առաջ ի հարկէ մեծ դեր է խաղացել պատահականութիւնը:

Ենթադրենք, օրինակ՝ թէ մէկի գլխացաւը, միւսի հազը, երրորդի լուծողութիւնը և այլն որևէ բան ուտելուց կամ խմելուց յետոյ անցել է: Ահա այդ մի առիթ էր, որպէսզի ենթադրուէր, թէ Post hoc, ergo propter

hoc *): Նախնական մարդը դժուար թէ կարողանար այլ կերպ բացատրել:

Այդպէս ենք մենք երեւակայում ներքին հիւանդութիւնների բժշկութեան ծագումը: Դրանով հիմք է դրվում փորձնական բժշկութեան:

Հիւանդի շրջապատողները փորձում են զանազան միջոցներով թեթեւացնել նրա տանջանքները, չգիտենալով ո՛չ հիւանդութեան էությունը, ո՛չ տուած միջոցների ունեցած ներգործութիւնը օրգանիզմի վրայ: Եւ որովհետեւ, ինչպէս ասացինք, այստեղ մեծ դեր էր խաղում պատահականութիւնը, ուստի ժողովուրդը շատ անգամ օգտաւէտ միջոցների հետ գործ էր ածում նաև բոլորովին անմիտ, մինչև անգամ վնասակար միջոցներ:

Այսպէս թէ այնպէս դարերի ընթացքում հաւարվում են բազմաթիւ գիտողութիւններ, որոնք փոխադրվում են սերնդից սերունդ:

Ժողովուրդը փորձի և գիտողութիւնների շնորհիւ ձեռք է բերում զանազան միջոցներ, որոնցից գլխաւոր տեղը բռնում են բոյսերը: Բայց եթէ, ինչպէս ասացինք, նա գաղափար չունէր հիւանդութեան էություն

*) Դրանից յետոյ, ուրեմն գրա շնորհիւ:

մասին, պարզ է, որ նրա միջամտութիւնը պէտք է սահմանափակուէր միմիայն հիւանդութեան նշանները ոչնչացնելով: Օրինակ՝ եթէ հիւանդը հագում էր, կամ ցաւում էր գլուխը, շրջապատողները տալիս էին՝ հազը, գլխացաւը թեթեւացնող միջոցներ, կարծելով թէ հիւանդութիւնը կայանում է հէնց հագի, գլխացաւի մէջ կային: Մարդկութիւնն այդպէս էր դատում հազարաւոր տարիներ առաջ, այդպէս են դատում դժբաղդաբար շատերը նաև այժմս, չնայելով որ վաղուց արդէն յայտնի է, թէ գլխացաւը, հազը կային միայն հիւանդութեան նշաններ են, որոնք կարող են երևալ զանազան տեսակ հիւանդութիւնների ժամանակ:

Վերջենք հազը: Ամբողջ մի շարք հիւանդութիւններ, ինչպէս, օրինակ՝ շնչափողատապը (ցղատապը), լանջամաշկատապը, թորքերի բորբոքումն, թորքախտը, խեղդուկը (ОСТМА), կապոյտ հազը (որցկահազը), համաճարակ դումը կային թէև ուղեկցվում են հազով, բայց դրանցից ամեն մէկը առանձին հիւանդութիւն է ներկայացնում, ամեն մէկը իր պատճառներն ու առանձնայատկութիւններն ունի, որոնցով և տարբերվում է միւսներից:

Այսպիսով ուրեմն չկայ գլխացաւ, հագ, չերմ, լուծողութիւն, կամ որեւէ ցաւ, այլ կայ հիւանդութիւն միայն, որի ժամանակ կարող են երեւալ այդ նշանները:

Նախնական մարդը, որ ամեն մի բնական երևոյթի մէջ ևս չար և բարի աստուածների մասնակցութիւնն էր տեսնում, չէր կարող ուրիշ կերպ դատել նաև հիւանդութիւնների վերաբերմամբ: Հին ազգերի կենցաղավարութեան—նիստուկացի ուսումնասիրութիւնից երևում է որ նրանք հիւանդութիւնները վերագրում էին չար ոգիներին: Համաճարակ հիւանդութիւնները մինչև անգամ միջին դարերում ևս վերագրվում էին չար ոգիներին (գեներին): «Ոչ մի կասկած չկայ որ ժանտախտը (peste), վարակիչ հիւանդութիւնները, ջերմը և միւս ծանր հիւանդութիւնները ո՛չ այլ ինչ են, բայց եթէ աստանայի (չար ոգու) գործ» (Լիւտէր):

Մեզանից ընդամենը հարիւր տարի առաջ հոգեկան հիւանդներին դեռ համարում էին դիւահար: Հէնց հիմա էլ խուլ—յետ ընկած տեղերում, ուր քաղաքակրթութիւնը դեռ ևս ներս չի թափանցել, այդպիսի հիւանդները դիւահար են համարվում: Բայց ո՛չ միայն չար ոգիները, այլև նրանց կար-

ծիքով չար մարդիկ, չար աչքերը նոյնպէս կարող էին հիւանդութիւն առաջացնել: Ուրեմն ի՛նչ էր մտում անել, եթէ ոչ աղօթել, որպէսզի բարի աստուածները հեռացնեն չար ոգիներին, չար աչքերը:

Այդ տեսակ բժշկութեան հետքեր մենք նկատում ենք նաև հիմա՝ գլխաւորապէս գիւղերում, ուր կրօնական ծէսերը, կախարդութիւնն ու խորհրդաւորութիւնը դժբաղդաբար դեռ ևս մեծ դեր են խաղում:

Հագարաւոր տարիներ առաջ եթէ ներելի էր այդպիսի հայեացք ունենալը, այժմ ուղղակի անմտութիւն, մինչև անգամ ոճրագործութիւն է հիւանդի վերաբերմամբ:

ԳԻՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆ

Սակայն բժշկականութիւնը հետզհետէ զարգանում էր, իսկ ժողովրդի փորձն ու դիտողութիւնները բազմանում: Եւ անա Ք. չորս դար առաջ երևան է գալիս մի մարդ, Հիպպոկրատ անունով, որ ամփոփում է ցիրուցան եղած փորձերն ու դիտողութիւնները, գանազան բժշկական միջոցները և այդպի-

սով հիմք է դնում գիտական բժշկանութեան: Նա հետու է արգէն այն կարծիքից, որ իբր թէ հիւանդութիւնները չար ոգիների գործ են և ընդունում է հիւանդութիւնների պատճառների երկու մեծ դասակարգ, այն է՝ ընդ-



Հիպոկրատ *)

հանուր և անհատական ազդեցութիւններ, ինչպէս, օրինակ՝ տարուայ ժամանակը, եղանակը, հասակը, ժառանգականութիւնը, պահեցողութիւնը (դէտա), պարապմունքները և այլն: Յետոյ ընդունում է որ մեր մարմինը

*) Բոլոր պատկերները կլէշէներն ստացել եմ պրոֆեսոր Մարտիկեցեցի, որին յայտնում եմ իմ լսողին շնորհակալութիւնս: Գ. Մ.

բաղկացած է չորս տարրից՝ ջրից, կրակից, հողից և օդից, որոնց համապատասխանում են չորս հիմնական հեղուկները՝ արիւնը, լորձանիւթը, դեղին և սև մաղձերը:

Հիպոկրատը հիւանդութիւնները վերագրում է նաև այդ հեղուկներից մէկի, մանաւանդ լորձանիւթի և մաղձի փոփոխութեանը: Բացի դրանից նա հասկանալով աղօթքների անզօրութիւնը բուժելու գործում, գալիս է այն եզրակացութեան, թէ հիւանդութիւնները բժշկվում են իրանը-իրանց: Հիպոկրատը այդ բուժիչ յատկութիւնը վերագրում է բնութեանը. նա ասում է. «Բնութիւնը հիւանդութեան բժիշկն է»:

Հիպոկրատի այդ վարդապետութիւնը հետզհետէ զարգանում է, որից յետոյ Հալէնը ասում է. «Հիւանդութիւնը ևս իր հասակներն ունի, ինչպէս և մարմինը. նա ծնվում է, աճում, հասունանում, յետոյ կարծես մի փոքր տատանուելուց՝ վերջանում է յաջող կամ անյաջող»:

Սակեպիադը ջերմին էր վերագրում բուժիչ ոյժը: Նա ասում էր. այդ՝ այսպէս ասած, օրգանիզմի ձիգն է հիւանդութիւնից ազատուելու: Եւ այդ իսկ պատճառով ջերմի

ժամանակ բացի դիէտայից նա ուրիշ ոչ մի միջոց չէր նշանակում:

Ինչպէս յայտնի է այժմս էլ կլինիցիստներին շատերը՝ Նօթնագէլից յետոյ նոյն կարծիքին են, ինչ որ և Ասկլեպիադը:

Սակայն ընդունելով այն, որ «հիւանդութեան բուժիչը բնութիւնն է», Հիպոկրատը և թէ նրա աշակերտները չեն հերքում բժշկի մասնակցութեան անհրաժեշտութիւնը: Նրանք ասում են՝ բժիշկը պէտք է ուշադրութեամբ հետևի հիւանդութեան ընթացքին, որպէսզի հարկաւոր եղած ժամանակ օգնութեան հասնի բնութեանը: «Հիւանդութիւնների ժամանակ անհրաժեշտ է օգնել, կամ չփնտսել», ասում էր Հիպոկրատը: Բացի դրանից նա չափից դուրս մեծ նշանակութիւն էր տալիս դիէտային:

Հիպոկրատի բժշկութիւնը պահանջում էր հակադրութիւնը հակադրութեամբ, այսինքն՝ «ներհակ բանը ներհակով բժշկել»: Նա ասում էր՝ «աւելորդութիւնից առաջացող հիւանդութիւնները բժշկվում են պակասացնելով, պակասութիւնից առաջացածները—աւելացնելով»: Միւս կողմից որժը—փսխումը բժշկելով արհեստական ոյժով, ջերմը տաք խմիչքներով, տաք վաննաներով

և այլն, նա գալիս է բոլորովին հակառակ եզրակացութեան և ասում է. «Նմանը բժշկվում է համանմանով»:

Բայց հասկանալի է, թէ Հիպոկրատի բժշկութեան հիմունքները չէին կարող բաւարարութիւն տալ բոլոր բժիշկներին: Այդ պատճառով բժիշկներից շատերը՝ չնայած Հիպոկրատի հեղինակութեանը, շեղվում են նրա վարդապետութիւնից. ուստի և սկսվում է բժշկական գիտութեան մի այլ շրջան:

Այժմս բժիշկները քարոզում են, որ ամեն մի հիւանդութեան դէմ կայ ինքնայատուկ դեղ. իսկ եթէ հիւանդութիւնն անբուժելի է, այդ միայն նշանակում է թէ դեռ ևս նրա համար համապատասխան դեղ չի գրտնուած:

Եթէ Հիպոկրատը և նրա աշակերտները նշանակութիւն չէին տալիս մարմնակազմութեան (անատոմիա), ասելով՝ թէ «փիլիսոփայ բժիշկը հաւասար է աստուածներին», նոր ուղղութեան ներկայացուցիչները բոլորովին հերքում էին նրա ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը. իսկ դրա հակառակ բժշկութեան առաջադիմութիւնը նրանք տեսնում էին փորձերի ու դիտողութիւնների մէջ: Ահա թէ ինչո՞ւ այդ ուղղութիւնը «էմ-

պիրիամ»—փորձնական բժշկութիւն անունն ստացաւ:

Բժիշկները այժմս հիւանդութիւնների դէմ նշանակում են զանազան և բաւական բարդ դեղեր: Դեղագործութիւնը զարգանում է:

«Հիւանդութիւնը բժշկվում է դեղերով և ոչ թէ ճարտարախօսութիւնով: Հետաքրքիրն այն չէ, ինչ որ առաջացնում հիւանդութիւնը, հետաքրքիրն այն է, ինչ որ բժշկում է», այդպէս է բնորոշում Ֆիլինը էմպիրիստի սկզբունքները:

Ինչպէս տեսնում ենք՝ բժշկականութիւնը այն ժամանակ ևս դեռ զուրկ էր իսկական գիտական հիմքից: Մի խօսքով՝ նա ոչ այլ ինչ էր, բայց եթէ այն միամիտ սկզբնական բժշկութիւնը, որի մասին վերև արդէն ասացինք: Բացի վերոյիշեալ երկու բոլորովին տարբեր շխտաների ներկայացուցիչներից, այդ ժամանակ երևան են գալիս բժիշկներ, որոնք գոյութիւն ունեցող վարդապետութիւններից ընտրում են այն, ինչ որ նրանց կարծիքով ճշմարտութիւն էր կազմում: Այդպիսի դրութեան մէջ էր գտնվում բժշկականութիւնը մինչև Բ-րդ դարը Ք. Յ., երբ Հալէնը բոլորովին նոր

ուղղութիւն է տալիս նրան: Մինչդեռ առաջ, ինչպէս տեսանք, բժիշկները շատ քիչ, նոյն-



Հալէն

իսկ բոլորովին ուշադրութիւն չէին դարձնում անատոմիայի վրայ, Հալէնը ամենից առաջ բժշկից պահանջում է բնական գիտութիւնների—անատոմիայի և ֆիզիոլոգիայի (բնախօսութեան) ուսումնասիրութիւն:

«Հիւանդ գործարանները բժշկելու համար հարկաւոր է հիմնովին ուսումնասիրել նրանց դասաւորութիւնն ու ֆունկցիաները բնական դրութեան մէջ», ասում է նա: Հիպպոկրատի նման Հալէնը ևս ընդունում է, որ հիւանդութիւնն անցնում է ինքնիրան—

174
45.2021



բնութեան ոյժի ազդեցութեան տակ և որ բժիշկը միայն հարկաւոր եղած ժամանակ օգնութեան է հասնում բնութեանը: Նա հիւանդութիւնների պատճառը վերագրում է հեղուկների փոփոխմանը, որի շնորհիւ փոփոխվում են և մարմնի կարծր մասերը: Հեղուկների շատութիւնից կամ պակասութիւնից առհասարակ առաջ են գալիս գանազան հիւանդութիւններ, իսկ ծանր հիւանդութիւններն առաջանում են սառն լորձանիւթի և տաք մաղձի խառնուելուց: Հալէնի ամենամեծ արժանաւորութիւններից մէկն էլ այն է, որ նա ցոյց է տուել, թէ երբ է բնութիւնն անկարող և հարկաւոր է բժշկի օգնութիւնը: Բացի դրանից նա բացատրել է բաւականաչափ հարցեր, որոնք վերաբերում են միքանի հիւանդութիւնների որոշման ու նրանց բժշկութեանը. նա նկարագրել է, օրինակ՝ ստամոքսի գանազան խանգարումները, յօդացաւը և այլն: Մեզանից համարեա 2000 տարի առաջ նա կարողացել է նկատել կլիմայի բարերար ազդեցութիւնը թոքախտոտների վրայ, որոնց նա ուղարկելիս է եղել Նգիպտոս, Լիզիա և այլն: Պահանջելով բժիշկներից՝ անատոմիա և ֆիզիոլոգիա ուսումնասիրել, Հալէնն ինքը լաւ ուսումնասիրում և նկարագրում է այդ

գիտութիւնների վերաբերեալ շատ բաներ: Այդ ամենի շնորհիւ Հալէնը այնպիսի հեղինակութիւն է ձեռք բերում, որ նրա գրուածքներով օգտվում և ղեկավարվում են բժիշկները ամբողջ դարերի ընթացքում. նրա ենթագրութիւններն անգամ ճշմարտութիւնների տեղ են ընդունվում:

Ծանօթանալով ներքին բժշկականութեան հետ անցեալում, անհրաժեշտ ենք համարում ցոյց տալ, թէ ինչ գրութեան մէջ էր գտնւում այդ ժամանակ վիրաբուժութիւնը:

Հեռաւոր անցեալում վիրաբուժութիւնն ու ներքին հիւանդութիւնները կազմում էին մի ամբողջութիւն: «Հեշտ է հասկանալ, որ այն ժամանակ, երբ մարմնի գեղեցկութեանը չափից դուրս մեծ նշանակութիւն էր սրվում, ինչպէս, օրինակ՝ Յունաստանում, արտաքին խանգարումների վրայ մեծ ուշադրութիւն էին դարձնում» (Բիլլըրօտ): Այդ պատճառով վիրաբուժութիւնը դեռ ևս Հիպպոկրատի ժամանակ և մանաւանդ նրանից յետոյ սկսում է զարգանալ:

Յելլի գրուածքներից երևում է, որ մեզանից համարեա 2000 տարի առաջ վիրաբուժութիւնն արդէն այնքան զարգացած է լինում, որ բժիշկները ասելիս են եղել՝ ան-

դամահատութիւն, քարահատութիւն (камне-
сечение), ստամոքսահատութիւն (гастрото-
мия), փորահատութիւն (лапаротомия), զա-
նազան պլաստիկ օպերացիաներ, հեռացնում
են եղել ոստախտ (катарракта) կայն, կայն:
Իսկ Պոմպէա քաղաքի պեղումներից երևում
է, որ վիրաբուժական գործիքներն անգամ
այդ ժամանակ շատ բաւարար են եղել: Բայց
մինչդեռ ներքին բժշկականութիւնը անցեա-
լում գիտական բնաւորութիւն էր կրում,
վիրաբուժութիւնը աւելի արհեստ էր, որով
պարապում էին բացի բժիշկներից, նաև
սափրիչները, բաղնէպանները կայն, որոնց
մէջ կային քար կտրողներ, վէրք առողջա-
ցնողներ, մանկաբարձներ կայն:

Հալէնը թէև ինքը շատ քիչ էր վիրա-
բուժութիւնով պարապում, սակայն նա հաս-
կանում էր նրա նշանակութիւնը և խորհուրդ
էր տալիս՝ որքան կարելի է, լաւ ուսումնա-
սիրել անատոմիան: Հալէնից յետոյ բժշկա-
կանութիւնն ընդհանրապէս և վիրաբուժու-
թիւնը մասնաւորապէս համարեա բոլորովին
առաջ չեն գնում:

Քրիստոնէական վարդապետութեան ազ-
դեցութեան տակ հիւանդութեան վրայ սկսում
են նայել՝ իբրև Աստծու պատիժ, որին պէտք

է հպատակուել առանց արտունջի, և ուրեմն
սչ թէ բժիշկը, այլ միայն Աստուած կարող է
հիւանդութիւնը բժշկել: Իսկ դրա համար
հարկաւոր է զոհաբերութիւն անել, աղօթել,
որպէսզի իջեցնուի Աստծու բարկութիւնը:

Այդ տեսակ հայեցողութիւնների ազդե-
ցութեան տակ քիչ է մնում որ առաջուայ
բժշկականութիւնը մոռացութեան տրուի-
բայց այդ ժամանակ բաւականին մեծ դեր
են խաղում արաբները. նրանք թարգմանում
են Հիպպոկրատի, Հալէնի և միջանի ուրիշ
բժիշկների շարադրութիւնները, շինում են
հիւանդանոցներ, հիմնում են համալսարաններ
կայն: Դժբաղդաբար նրանք չեն կարողա-
նում անատոմիայով զբաղուել, որովհետև
Ղուրանը թոյլ չէր տալիս այդ:

Արաբների միջոցով Հիպպոկրատի և Հա-
լէնի միջիչ փոփոխուած բժշկականութիւնն
անցնում է Սպանիա, յետոյ Իտալիա, որտեղ
Սալէրնո քաղաքում IX դարի սկզբին հիմ-
նրվում է մի ուսումնարան. դա Collegium
Hippocraticum-ն էր: Այդտեղ էին հաւաք-
վում և սովորում գլխաւորապէս չորս ազ-
գութիւններ՝ հոլմայեցիք, հրեաներ և արաբ-
ներ: Collegium Hippocraticum-ի խոշոր
պակասութիւնն այն էր, որ այդտեղ սովո-

րում էին թէօրեաիկ կերպով միմիայն բժշկական գիտութիւնները, իսկ հիւանդներին հիւանդանոցներում դիտելու հնարաւորութիւն չունէին:

Այդպէս էր բժշկականութեան գրութիւնը մինչև վերանորոգման շրջանը: Իսկ երբ միջին դարերում սկսում են հրացան ու գնդակ գործածել և առաջ են գալիս նորանոր վէրքեր, բժիշկները հասկանում են անատոմիայի անհրաժեշտութիւնը և ասում են. «Առանց անատոմիայի ոչինչ չի կարելի անել վիրաբուժութեան մէջ»: Այժմ առանձին ուշադրութեամբ նրանք սկսում են անատոմիայով զբաղուել, թէև ոչ առանց խոչընդոտների:

1556 թ. Սալամանկայի համալսարանում քննվում է Կարլոս V-ի հարցը. «Արդեօք վայել է կաթոլիկ քրիստոնեաներին մարդկային դիակներ կտրտել»: Բարեբաղդաբար համալսարանը դրական պատասխան է տալիս, այնպէս որ դրանից յետոյ անատոմիան սկսում է շուտով զարգանալ:

Անատոմիայի զարգացման հետ զարգանում է և վիրաբուժութիւնը, որ այժմ գիտական հողի վրայ է կանգնած: Մինչ այդ դեռ ևս իշխում էր Հալէնի վարդապետու-

թիւնը: Ոչ ոք չէր համարձակվում գրել նրա դէմ, որովհետև այդպիսիներին խիստ հալածում էին:

1560 թ. Վեզալին էր առաջինը, որ տատանեց Հալէնի անատոմիական, իսկ նրանից յետոյ էլ 1628 թ. Հարվէյը՝ նրա ֆիզիոլոգիական հեղինակութիւնը, երբ բացատրեց սրտի գործունէութիւնն ու արեան շրջանառու-



Վ. Եզալին

թիւնը: Պատմում են, որ Վեզալինն՝ անատոմիա ուսումնասիրելու ձգտումն ստիպում էր մինչև անգամ գողանալ կախուածների դիակները. ցերեկով այդ դիակները նա պահելիս

է լինում իր անկողնում, իսկ գիշերներն ուսումնասիրում:



Վեզալեյ և կախուածներէ գեակաները:

1608 թ. անատոմիայի ուսումնասիրութեան ձևերը հարստանում են մի նոր գիւտով, այն է՝ խոշորացոյցով, որ մանրադիտական անատոմիայի հիմքն է դնում: Անատոմիայի համար բացվում է բոլորովին նոր աշխարհ և այդ ժամանակից նա սկսում է այնպէս արագ զարգանալ, որ XIX դարի

սկզբին արդէն դառնում է բնական գիտութիւնների ամենակատարեալը:

Բնական գիտութիւնների զարգացման հետ բազմանում էին և բժշկական միջոցները, ստեղծվում էին զանազան թէօրիաներ՝ հիւանդութիւնների էութեան և նրանց բժշկութեան մասին: Իսկ երբ XVI դարում



Հաւելեյ

յայտնի է դառնում սնդիկի ազդեցութիւնը վատ ցաւի վրայ, Պարացելը այն եզրակացութեանն է գալիս, որ Սասուած ամեն մի հիւանդութեան դէմ առանձին դեղ է ստեղծել և որ ամբողջ աշխարհը ոչ այլ ինչ է,

բայց եթէ մի դեղատուն: Բժիշկը՝ նրա կարծիքով, պէտք է ուսումնասիրէ բնութեան երևոյթները և նրանց մէջ որոնէ նմանութիւն որոշ հիւանդութիւնների հետ: Պարացելսի ազդեցութեան տակ բժիշկները ջրգողութիւնը համեմատում են հեղեղի, կաթուածը՝ կայծակի, ծիրուցութիւնը՝ չորութեան հետ կայն: Այստեղից պարզ է նաև բժշկութիւնը. ջրգողութեան ժամանակ հարկաւոր է հեռացնել հեղուկը և այս կամ այն կերպով աշխատել չորացնել ոստայնը: Բացի դրանից սկսում են զանազան միջոցներ գործածել՝ աչքի առաջ ունենալով այդ միջոցների նմանութիւնը զանազան օրգանների հետ: Օրինակ. *Anacordium orientale* բոյսը՝ որի տերևները նման են սրտին, գործ են անում սրտի հիւանդութիւնների դէմ. *Poligonum persicaria*՝ որի տերևների վրայ կարմիր բծեր են լինում, գործ են անում արիւնահոսութեան դէմ. *Ranunculus*՝ որի տերևները նման են երկկամունքներին, գործ են անում երկկամունքների հիւանդութիւնների դէմ կայն: Դեռ վաղուց յայտնի էր նոյնպէս հանքային ջրերի բուժիչ յատկութիւնը, որոնց գործածութիւնը հիմա աւելի ևս ընդարձակ ծաւալ է ստանում: Դեղագործութեան զարգացման շնորհիւ,

բժիշկներն աշխատում են ընդհանուր կամ ինքնայատուկ *) դեղեր գտնել: Սանտորոն առաջարկում է համարեա միշտ քրտնաբեր միջոցներ. Սիդենհամը՝ երբ XVII դարում յայտնի է դառնում քինինի յատկութիւնը, աշխատում է յատկապէս գտնել բոյսերի մէջ. ուրիշները ամեն մի հիւանդութեան ժամանակ առաջարկում են արիւն թողնել, լուծողական տալ կայն:

Երբեմն 3—4 գրուանքայ արիւն էին թողնում երակներից և այդ արիւն թողնելը միջին դարերում մի այնպիսի սովորական երևոյթ է եղել, որ օրացոյցներ էին կազմելովում, թէ երբ, ինչպէս և որտեղից հարկաւոր է արիւն թողնել: Սակայն ոչ միայն միջին դարերում, այլ XIX դարում էլ բժիշկները դեռ չէին հրաժարուել այդ տեսակ արեհոսութիւնից: Շատ տեղերում մինչև հիմա էլ դեռ մնում են ժողովրդի մէջ դրա հետքերը: Ֆրանսիացի յայտնի կլինիցիստ Բրուսսէն ստամոքսի և աղիքների հիւանդութիւնների ժամանակ պատուիրում է եղել

*) Ինքնայատուկ միջոց այն է, որ ներգործում է ուղղակի հիւանդութեան վրայ և ոչ թէ նրա նշաններէ դէմ:

100 ազրուկ կպցնել: Bouillaud՝ը XIX դա-
րումն էլ տենդային հիւանդութիւնների ժա-
մանակ պատուիրելիս է՝ եղել համարեա ամեն
մի ժամ արիւն թողնել: Չափից դուրս տա-
րածուած է եղել նոյնպէս լուծողական
զրեխը:

Թէ որքան միակողմանի և շարժուն է եղել
այդ ժամանակուայ բժշկութիւնը, ցոյց է
տալիս հետեւեալ կտորը Պետերսընի շարա-
զրութիւնից: Գործողութիւնը կատարվում է
Ստրազբուրգի զինուորական հիւանդանոցում.
բժշկողը հիւանդանոցի գլխաւոր բժիշկն է.

—Jean, comment vous portez-vous?
հարցնում է բժիշկը:

—Très mal, monsieur le medecin!*)
պատասխանում է հիւանդ զինուորը:

—Avez-vous été saigné?

—Oui, monsieur.

—Avez-vous pris la médecine à pur-
ger?

—Oui, monsieur***) և բժիշկը գնում

*) «Յովհաննէս, ի՞նչպէս ես».—«Շատ վատ, պա՛րոն
բժիշկ»:

**) «Արիւն թողե՞լ ես, քեզանից».—«Այո՛, պա՛րոն
բժիշկ».—«Լուծողական ընդունե՞լ ես».—«Այո՛, պա՛րոն
բժիշկ»:

է իր երկու մատը հիւանդի զարկերակի
վրայ ու հրամայում աջ կողմը՝ «արիւն թող-
նել», ձախ կողմը՝ «լուծողական տալ» և
գնում է միւս հիւանդի մօտ, որտեղ կրկնվում
է միևնոյնը:

Այդ տեսակ անկատար բժշկութիւնը չէր
կարող աննկատելի մնալ գիտող մարդկանց
համար: Հասկացողները հեգնօրէն էին վե-
րաբերվում. իսկ Մօլլիէրի «Կեղծ հիւանդ»
կօմեդիան ո՛չ այլ ինչ է, բայց եթէ մի կծու
երգիծաբանութիւն այդ ժամանակուայ բը-
ժիշկների դէմ: Այդպիսով միջնադարեան
բժշկականութիւնը ևս շատ քիչ է տարբերվում
այն սաղմային բժշկականութիւնից, որ գոյու-
թիւն ունէր Հիպոկրատի և Հալէնի ժա-
մանակ: Բժիշկները, ինչպէս առաջ, դեռ
ճիշտ գաղափար չունէին հիւանդութիւնների
էութեան, ուրեմն և նրանց բժշկութեան
մասին:

Բայց անս XVIII դարի երկրորդ կէսին
երևան է գալիս Մօրգացի անունով մի բը-
ժիշկ. սա հիմք է գնում մի նոր գիտութեան,
որ պատօլօգիական (ախտաբանական) անա-
տօմիա է կոչվում: Պատօլօգիական անատօ-
միան, ինչպէս յայտնի է, ուսումնասիրում է
այն փոփոխութիւնները, որոնք կատարվում

են օրգանիզմում այս կամ այն հիւանդութեան ազդեցութեան տակ, որոնում և աշխատում է բացատրել նրանց պատճառները. նա ոչնչացնում է զանազան սխօլառարիկ թէօրիաները, որոնք գոյութիւն ունէին մինչ այդ հիւանդութեան էութեան մասին: Սակայն սկզբում նա մեծ ազդեցութիւն չի գործում բժիշկների վրայ, որովհետև հին հայեացքները դեռ այնքան ուժեղ էին, որ ժամանակ էր հարկաւոր նրա յաղթականի համար:

Միայն XIX դարի սկզբին շնորհիւ Ռօկիտանսկու և մանաւանդ Վիրխովի պատօլօգիական անատօմիան չափազանց ծաղկում է և բժշկականութեան զարգացման անհրաժեշտ ֆակտորը դառնում: Միւս կողմից նրա հետ կից սկսում է զարգանալ փորձնական ախտաբանութիւնը: Այժմն բժիշկները հնարաւորութիւն ունին ճշտօրէն բացատրելու զանազան հիւանդութիւնների պատճառները: Ռուզօլֆ Վիրխովը ցոյց է տալիս, որ հիւանդութեան արտայայտութեան տեղը բջիջն է և որ հիւանդութեան էութիւնը կայանում է այդ բջիջի բնական զրութիւնից առաջացած խանգարման մէջ: Այդպիսով նա հիմք է դնում բջիջային ախտաբանութեան: Բջիջների

խանգարումները կայանում են նրանց ֆունկցիաների կամ մուշտի մէջ և առաջանում են հետեւել՝ երկու տեսակ պատճառներից.



Ռ. Վիրխով

Առաջին՝ հեռաւոր պատճառներ, նպատոյ պայմաններ, տրամադրութիւն. երկրորդ՝ զանազան գրգռումներ, ինչպէս՝ մեքենայական, քիմիական, ելեքտրական, կայն, կայն: Երբ պատօլօգիական անատօմիայի շնորհիւ բժիշկներն ուսումնասիրում են այն փոփոխութիւնները, որոնք գոյանում են օրգանիզմում հիւանդութեան ազդեցութեան տակ, նրանց մէջ միտք է յղանում, թէ ար-

դեօք չի կարելի այնպիսի հետազոտութեան միջոցներ գտնել, որոնցով կարելի լինէր հիւանդի կենդանւոյ ժամանակը հասկանալ նրա մարմնում կատարուած փոփոխութիւնները: Դեռ Հիպոկրատի ժամանակ չափից դուրս մեծ նշանակութիւն էին տալիս «ախտորոշանքին» (diagnostique):

Բժիշկներն այդ ժամանակ հետազոտում էին հիւանդի ընդհանուր դրութիւնը, նրա գոյնը, տաքութիւնը, շնչառութիւնը, մարսողական գործարանները ևայլն: Մարմնի արտաքին չնչին ձևափոխութիւնները նրանց նկատելի էր և նրանք գրանով որոշում էին կրծքի և որովայնի հիւանդութիւնները: Բացի դրանից նրանք գործ էին ածում ականջելը (выслушивание), գլխաւորապէս լանջամաշկի թարախատալի. (эмпиема) ժամանակ, ձեռնատրոփը (постукивание), որ յայտնի չէր Հիպոկրատին և նրա աշակերտներին: Այդ յայտնի է դառնում միայն XVIII դարի վերջին, իսկ XIX դարի սկզբին էլ ականջելը, որ բոլորովին մոռացութեան էր տրուած: Այդ երկու՝ այժմս կատարելագործուած միջոցների շնորհիւ շատ անգամ բաւականին ճիշտ որոշվում են ներքին գործարաններում զանազան հիւանդութիւնները:

Միջոցառում փոփոխութիւնները: Այդ երկու Ֆիզիքական հետազոտական ձևերին հետզհետէ աւելանում են բազմաթիւ ուրիշ Ֆիզիքական, ինչպէս նաև քիմիական ու մանրադիտական ձևեր:

Միւսոյն ժամանակ բժիշկները մօտիկ ծանօթանալով հիւանդութիւնների էութեան և դեղերի՝ նրանց վրայ ունեցած ազդեցութեան հետ, այն կարծիքն են յայտնում, թէ իրանք կարող են որոշել հիւանդութիւնը, հասկանալ նրա էութիւնը, պակաս չեն համարձակվում կարծել, որ իրանք կարող են որևէ միջոցով առողջացնել հիւանդին: Նրանք տեսնում են, որ դեղերը հիւանդութիւնների ընթացքի վրայ մեծ մասամբ ոչ մի նշանակութիւն չունին և որ իրանք անկարող են վերականգնել փոխուածը:

Բժիշկներն այժմս փաստօրէն համոզվում են բնութեան բնութիչ ոյժի մէջ. մի միտք՝ որ դեռ 2000 տարի առաջ արտասանել է Հիպոկրատը: Դրա ամենալաւ ապացոյցը վարակիչ հիւանդութիւններն են. օրինակ՝ կարմրուկը, քութէշը, դիֆտերիաը, թոքերի բորբոքումը ևայլն, որոնք տեսնում են որոշ ժամանակ և ոչ մի միջոցով չի կարելի ոչ նրանց առաջն առնել, ոչ կրճատել այդ ժա-

մանակը, ուրեմն և անմիջապէս ազդել հիւ-
 ւանդութեան վրայ: Բացի գրանից, չնայած
 այն յաջողութեանը, որին հասել էր բժշկա-
 կան տեխնիկան, չնայած բազմաթիւ նորա-
 նոր բժշկական միջոցներին, հիւանդանոց-
 ներում զեռ ևս կոտորած էր անում փտախար
 (гангрена), կերքաւը (антоновъ огонь),



Պաստէօր

և անխնայ գերեզման տանում բազմաթիւ
 զոհեր և գրանով համարեա բոլորվին ոչնչա-
 ցնում վիրաբուժութեան նշանակութիւնը:
 Ահա թէ ինչպէս հեգնօրէն էին գնահատում
 վիրաբուժները գործունէութիւնը.

— «Օպերացիան յաջող անցաւ, բայց հի-
 ւանդը մեռաւ»: Եւ այդ՝ միմիայն 30—40
 տարի առաջ:

1857 թ. հանճարեղ Պաստէօրն ապացու-
 ցանում է, որ խմորման և փտումի պատ-
 ճառը միկրօօրգանիզմներն են:

Դրանից յետոյ հեշտ էր արդէն հաս-
 կանալ փտախտի պատճառը: Մնում էր
 միջոց գտնել մի կերպ ոչնչացնելու այդ միկ-
 րօբները: Եւ անհ 1865 թ. Լըմէրը նկատ-
 տում է, որ կարբօլեան թթուութիւնը կարճ ժա-
 մանակամիջոցում ոչնչացնում է խմորումն:
 Դրանից 2—3 տարի յետոյ Լիստէրը զար-
 գացնում և լուսաբանում է այդ միտքը, իսկ
 1868 թ. նկարագրում վարակաշինջ կալանդի
 (повязка) փայլուն հետեանքները:

Սակայն Պաստէօրի գիւտի նշանակու-
 թիւնը բժշկականութեան համար գրանով
 միայն չի սահմանափակվում. նա հիմք է
 դնում նաև մի նոր բժշկական գիտութեան,
 այն է՝ բակտերիօլոգիայի, որ՝ ինչպէս կը-
 տեսենք, ահագին նշանակութիւն է ունեցել
 և զեռ ունենալու է: Բայց նախ միքանի
 խօսք Ջեննէրի գիւտի մասին:

XVIII գարի վերջին անգլիացի բժիշկ
 էջոուա ըդՋեննէրին յաջողվում է գտնել ծաղ-

կի պատուատման եղանակը: Նա նկատում է, որ այն մարդիկ, որոնք ծաղկով հիւանդ կովեր են կլթում միշտ, երբէք չեն վարակվում իսկական ծաղկով: Դրանից յետոյ Ջեննէրը փորձում է կովի ծաղիկը մարդ-



Կատէր

կանց պատուաստել — ծաղիկը կտրել և տեսնում է, որ վերջինները հիւանդանում են ծաղկի միայն ամենամեղմ տեսակով: Այդպիսով նա ցոյց է տալիս, որ կովի ծաղիկը կարող է իբրև նախազգուշացուցիչ միջոց ծառայել իսկական ծաղկի դէմ: Այդ գիւտից

յետոյ՝ 1847 թուին Պաստէօրը մի շարք գիտնականների հետ, ինչպէս՝ Կօխը, Բենրինգը, Ռուն և այլն գտնում է թարախախտի (piemia), նեխախի (septicemia), խօլերայի, թոքախտի և ուրիշ հիւանդութիւնների միկրօբները: Նրանց շնորհիւր մենք այժմ գիտենք, որ այդ միկրօբներն են առաջացնում վարակիչ ասուած հիւանդութիւնները:

Ջեննէրի ծաղկի նախազգուշացուցիչ պատուաստումն *) առիթ է տալիս Պաստէօրին մտածելու, թէ արդեօք չի կարելի նոյնպիսի պատուաստումն գտնել և միւս վարակիչ հիւանդութիւնների համար: Եւ նա սկսում է գանազան փորձեր անել ու մէկը միւսի ետևից նրան յաջողվում է գտնել սիրբրական խոցի, ջրվախտութեան — կատաղած շան կծածի նախազգուշացուցիչ պատուաստը: Պաստէօրի փորձերը այնքան յաջող էին, որ զամացած գիտնականները իսկոյն հետևում են նրա օրինակին, և նրանցից միքանիսը, ինչպէս՝ Ռուն, Բենրինգը և այլն շուտով առաջարկում են դիֆտերիաի և ջղերի կարկամութեան դէմ յաջող շիճուկներ:

Առաջարկվում են նոյնպէս մի շարք ու-

*) Տե՛ս իմ «Մայր և Երեխայ» գրքոյի Եր. 129-ր:

բիշ շիճուկներ. ինչպէս, օրինակ՝ թոքախտի, տիֆի (վարցաւ) և այլ հիւանդութիւնների դէմ, թէպէտև վերջինները դեռ ևս չի կարելի յաջող անուանել:

Այսպէս թէ այնպէս՝ փաստն այն է, որ այդ ուղղութիւնը իսկական գիտական հողի վրայ է կանգնած և արժանի է ամենալուրջ ուշադրութեան, որովհետև այդ է ամենակատարեալ բժշկութիւնը: Մենք արդէն գիտենք, որ շատ քիչ բացառութեամբ, անկարող ենք զանազան դեղերով հիւանդութիւններ բժշկել. որովհետև, ինչպէս վերև ասացինք, հիւանդութեան բժիշկը բնութիւնն է — օրգանիզմի կենսական ոյժը: Վերոյիշեալ ուղղութիւնը հէնց նրանով է կատարեալ, որ իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնում է բնութեան և օրգանիզմի այդ կենսական ոյժի վրայ: Նա առաջարկում է միջոցներ, որոնք զրգուով են օրգանիզմը՝ եռանդուն կռիւ մղելու հիւանդութեան արտադրիչի — միկրօբների դէմ: Բացի այդ բոլորից վաղուց արդէն յայտնի էր առողջապահութեան նաև դիէտայի մեծ նշանակութիւնը բժշկութեան համար: Դեռ ևս Հիպոկրատի բժշկութիւնը կրում էր այդ բնաւորութիւնը: «Կենցաղավարութեան կարգա-

ւորումը Հիպոկրատի բժշկութեան մէջ առանձին դեր է խաղում ոչ միայն իբրև միջոց, որ պահպանում է ոյժն ու առողջութիւնը, այլև իբրև ամենագլխաւոր միջոց՝ հիւանդութիւնները բժշկելու համար (Մորոխովէց):

Դիէտետիկ — առողջապահական բժշկութեան մեթօդը իր բարձրագոյն զարգացման է հասնում մանաւանդ Հալէսի ժամանակ: Ամեն մի հիւանդութեան ժամանակ Հալէսը պահանջում է կարգաւորել հիւանդի ուտելիքն ու խմելիքը: Այժմ մենք գիտենք, որ հիւանդի համար մեծ նշանակութիւն ունին հանգիստ դրութիւնը, լաւ հոգատարութիւնը, նպատակայարմար սնունդը, մաքուր օդը, լոյսը և այլն: Իսկ թէ ինչն է հարկաւոր այդ ամենը, պարզ է ինքնըստինքեան:

Եթէ մենք ենթադրում ենք, որ հիւանդութեան բուժիչը ինքն օրգանիզմն է, ապա ուրեմն ըստ կարելոյն մենք պէտք է նպաստենք նրան՝ իրագործել այդ խնդիրը: Օրին. յայտնի է, որ թոքախտաւորի համար հարկաւոր է մաքուր օդ, առատ սնունդ և այլն. ուրեմն պէտք է աշխատել նրան այդ պայմանների մէջ դնել: Միւս կողմից յայտնի է, որ կան հիւանդութիւններ, որոնք փոխ-

վում են հիւանդից շրջապատողներին. հետե-
ւապէս հարկաւոր է այնպիսի պայմաններ
ստեղծել, որպէսզի կարելի լինի խուսափել
այդ վտանգից:

Բացի դրանից վերջին տարիները մենք
հնարաւորութիւն ունինք՝ շիճուկային բժըշ-
կութեան շնորհիւ միքանի հիւանդութիւնների
առաջն առնելու նախազգուշացուցիչ բժըշ-
կութեամբ: Մի խօսքով՝ մենք այժմս ամեն
կերպ աշխատում ենք հիւանդ օրգանիզմը
դնել այնպիսի պայմանների մէջ, որպէսզի
նրա համար որքան կարելի է հեշտ լինի
կուռել հիւանդութեան դէմ:

Գ Լ Ո Ի Խ Բ

ժամանակակից բժշկականութիւնը և բժշկական
արուեստի սահմանները:

Նկարագրելով համառօտակի բժշկականու-
թեան զարգացումը մինչև նորագոյն ժամա-
նակները, այժմ տեսնենք, թէ ինչ է ներկայ-
ացնում նա ներկայումս: Եթէ XIX-րդ դա-
րը համարվում է առհասարակ գիտութիւննե-

րի ծաղկման դար, մասնաւորապէս այդ ա-
մենից աւելի վերաբերում է բժշկականու-
թեան: Դեռ ևս XIX-րդ դարի սկզբին Շօ-
պենհաուէրն ասում էր. «Միջնորդի այն-
պիսի չնչին փոփոխութիւնը, որ քիմիական
վերլուծութեան միջոցով անգամ անկարելի
է պարզել, առաջացնում է խօլերա, դեղին
տենդ, ժանտախտ, որոնք միլիօնաւոր զոհեր
են տանում. իսկ մի փոքր աւելի փոփոխու-
թիւնը կարող է նոյնիսկ հանգցնել ամբողջ
կեանքը»:

Հարումանը համոզուած էր, որ չնայած
այն յաջողութեան, որին կարող է հասնել
մարդկութիւնը, նրան երբէք չի յաջողուի
նչ միայն ազատուել հիւանդութիւններից,
այլ մինչև անգամ պակասացնել դրանց թի-
ւը*): «Որքան էլ,— շարունակում է նա— հի-
ւանդութիւնների դէմ միջոցներ գտնուեն, այ-
նուամենայնիւ, դրանք՝ մասնաւորապէս յարատե և
անվտանգ ու շատ տանջող հիւանդութիւննե-
րը բժշկականութիւնից արագ կը զարգանան»:

Թէ Շօպենհաուէրի և թէ Հարումանի կար-
ծիքը բաւական է միայն համեմատել գիտա-
կան բժշկականութեան ներկայ դրութեան

*) „Этюды о природе человека“. (Մեչնիկով)

հետ, որպէսզի մարդ համոզուի այն ահագին յաջողութեան մէջ, որին հասել է ժամանակակից բժշկականութիւնը:

Մենք այժմս գիտենք ոչ-միայն խօշորայի, ժանտախտի իսկական պատճառները, այլև միջոցներ ունինք նրանց զարգացման առաջն առնելու: Բացի դրանից շատ լաւ հասկացել ենք, որ հետևելով առողջապահու-



Ջ. Է. Է. Է.

թեան կանոններին, մենք թէ թեթևացնում ենք հիւանդութիւնները և թէ պակասացնում նրանց թիւը:

Այն, բժշկականութիւնը XIX-րդ դարում և մասնաւանդ նրա երկրորդ կիսում աւելի է զարգացել, քան հազարաւոր տարիների ընթացքում: Ջեննէրի, Պաստէօրի, Լիստէրի, Կօխի, Բենրիքի և այլ գիտնականների գիտերը այնքան յայտնի, այնքան խոշոր երեւոյթներ են, որ ապացուցանել նրանց բարձր նշանակութիւնը՝ բոլորովին աւելորդ է:

Ամբողջ մի շարք գիտնական բժիշկների շնորհիւ բժշկականութիւնն այնպիսի զարգացման է հասած, որ մարդկութիւնը կարող է հպարտանալ դրանով:

Մենք այժմս ոչ-միայն գիտենք հիւանդութիւնների մեծամասնութեան պատճառները, այլև նրանց ընթացքը և այն փոփոխութիւնները, որոնք կատարվում են օրգանիզմում. գիտենք թէ ինչ ազդեցութիւն ունի հիւանդի վրայ այս կամ այն գեղը, և այլն և այլն:

Այժմեան տեսակէտից՝

«Հիւանդութիւնը օրգանիզմի կամ որևէ գործարանի բնական կենսական գործողութիւնից շեղուելն է, որ առաջանում է հիւանդաբեր պայմանների ազդեցութեան տակ: Հիւանդութիւնը՝ կեանքն ինքն է յայտնի պայմաններում»: (Վիրխով):

Ուրեմն բժշկել՝ նշանակում է այնպիսի

ազգեցութիւն գործ դնել ախտաբանական պրօցէսաների էութեան վրայ, որ նրանք այլևս չզարգանան, որպէսզի փոփոխուած հիւտուածքը նորից իր բնական հիւտուածաբանական հիստօլօգիական տեսքն ընդունէ, որպէսզի խանգարուած ֆունկցիաները նորից վերականգնուեն: Կամ աւելի կարճ ասած. բժշկել՝ նշանակում է վերականգնել այն շեղումը, որ առաջացրել է հիւանդութիւնը:

Աչքի առաջ ունենալով բժշկութեան այդ որոշումը, տեսնենք թէ բժշկականութիւնն այժմս ինչ չափով է նպաստում հիւանդութիւնների բժշկուելուն:

Գիտական բժշկականութիւնը մեզ ցոյց է տալիս, որ չնայած այն յառաջադիմութեանը, որին նա հասել է, նրա իսկական ոյժը դեռ էլի շատ չնչին է: «Դուք ուսումնասիրում էք մեծ և փոքր աշխարհը, որպէսզի վերջիվերջոյ թողնէք բոլորը Աստրծու կամքին»: Մեֆիստօֆէլը երգիծաբանօրէն այդպէս է բնորոշել բժշկականութեան ոյժն ու գիտութիւնը:

Մենք այժմս շատ լաւ գիտենք, որ հիւանդութիւնները բժշկվում են իրանք իրանց, որ գեղերը երկրորդական նշանակութիւն ունին և ազդում են միայն հիւանդութեան

նշանների վրայ ու թեթևացնում հիւանդի տանջանքները: Վերջնենք, օրինակ՝ վարակիչ հիւանդութիւնները — թորախտ, տիֆ (վար-



Կօխ

ցաւ), քուիթէշ, խօլերա, ժանտախտ ևայլն, որոնք առաջանում են այս կամ այն միկրօբների շնորհիւ: Այդ հիւանդութիւններից, ինչպէս յայտնի է, կարելի է առողջանալ. բայց հիւանդութեան բուժիչը բնութիւնն է, այսինքն՝ օրգանիզմի կենսական ոյժը: Բժիշկը հիւանդին դնում է առողջապահական պայմանների մէջ, հեռացնում, կամ թեթևացնում է վնասակար և տանջանք պատճառող նշանները, կարգաւորում է հիւանդի սնուն-

զը. մի խօսքով՝ նպատու է հիւանդութեան բարեյաջող ընթացքին: Բայց կարճ է արգեօք անմիջապէս հիւանդութեան վրայ ազդել, սպանել միկրօբները: Դժբաղդաբար ոչ: Միմիայն 2 - 3 յատկազեղ (специфический) կայ, որոնք գործում են անմիջապէս հիւանդութեան դէմ: Դրանցից մինը քինինն է՝ մալարիայի դէմ, միւսը սնդիկը՝ վատ ցաւի դէմ և երրորդը գուցէ ուռիտական (СОЛИЦИЛОВЫЙ) նատրօնը՝ յօղացաւի դէմ: Այդ երկու-երեք դեղն էր, որ մի ժամանակ առիթ տուաւ ամեն մի հիւանդութեան դէմ յատկազեղեր որոնել. բայց, ինչպէս յայտնի



Բեհերեղ

է, այդ ուղղութիւնը վաղուց արդէն հիասթափեցրել է բժիշկներին:

Ստամբուլի և աղիքների բորբոքման ժամանակ մենք աշխատում ենք այս կամ այն կերպ ազատել նրանց զրգոող նիւթերից, ձեռք ենք առնում նպատակայարմար միջոցներ և այդպիսով դադարեցնում ենք բորբոքումը. իսկ ինչ վերաբերում է բորբոքմանը, մենք ոչ մի միջոցով չենք կարող ոչնչացնել: Այստեղ բժշկողն ինքը օրգանիզմն է:

Մի կողմ թողնելով դեղային բժշկութիւնը, անցնենք վիրաբուժութեան:

Ժամանակակից վիրաբուժութիւնը այն տեսակ զարգացման է հասել, որ այժմ նրան մատչելի են մարմնի բոլոր օրգանները: Վիրաբուժները այն տեսակ օպերացիաներ են անում, որոնց մասին 30—40 տարի առաջ մտածել անգամ չէին համարձակվում:

Բայց աչքի առաջ ունենալով բժշկութեան իդէալական որոշումը՝ վերականգնել այն շեղումը, որ առաջացրել է հիւանդութիւնը, — կարճ ենք արդեօք կատարեալ անուանել բժշկութիւնը, երբ, օրին. բոլորովին հեռացնում են հիւանդ արգանդը, ձուարանները, երիկամները — սլոճիկը, ստամոքսը, ձեռը, ոտը և այլն: Ի հարկէ ոչ, և հիւանդի համար այդ միակ միջոցը յաճախ անկատար է: Միւս կողմից, ոսկորների, մկանների, նեարդերի և

ուրիշ հիւսուածքների ամբողջութեան խանգարման ժամանակ մենք չենք կարող որևէ միջոցով վերականգնել նրանց ամբողջութիւնը, սակայն մենք անկասկած կարող ենք բարեյաջող պայմաններ ստեղծել, որպէսզի բնութիւնն ինքը վերականգնէ այդ խանգարումը: Նոյնն ենք անում, երբ, օրին. շիճուկ ենք սրակում հիւանդի կաշու տակ և այդպիսով օրգանիզմը պատրաստում ենք՝ աւելի յաջող կուտելու հիւանդութեան դէմ: Մի խօսքով՝ կրկնում ենք, մենք այժմ լաւ գիտենք, թէ հիւանդութիւնները մեծ մասամբ բժշկվում են իրանք իրանց, օրգանիզմի բուժիչ ոյժի շնորհիւ, և որ դեղերն ու զանազան ուրիշ միջոցները միայն երկրորդական, կողմնակի նշանակութիւն ունին: Սակայն ընդունելով հանդերձ որ հիւանդութեան բուժիչը մեծ մասամբ բնութիւնն է, մենք չենք ոչնչացնում դրանով բժիշկների նշանակութիւնը, ընդհակառակը՝ նրանց համար մնում է մի մեծ ասպարէզ, որ՝ մեր կարծիքով, բաց է անում նրանց առաջ ի միջի այլոց չորս՝ չափից գուրս նշանաւոր գործողութիւններ, որոնք են՝ 1. Հիւանդութեան որոշումն, 2. Հիւանդութեան նշանների բժշկութիւն, 3. Դիէտետիկ—առողջապահական բժշկու-

թիւն և 4. Հոգևբուժութիւն (психотерапия).

Բժշկի ամենագլխաւոր խնդիրը հիւանդութեան որոշումն է, որ, ինչպէս վերև ասացինք, անհրաժեշտ է թէ հիւանդի և թէ շրջապատողների համար: Մենք տեսանք, որ բժիշկը օգնութեան է հասնում բնութեան՝ հիւանդին դնելով ամենանպաստաւոր պայմանների մէջ և ոչնչացնելով կամ թեթևացնելով նրա տանջանքները: Բայց դրա համար հարկաւոր է որոշել հիւանդութիւնը, որովհետև այս կամ այն ախտորոշումից է կախուած այդ օգնութիւնը: Մի խօսքով՝ հին կանոնը, թէ „qui bene diagnoscit, bene medebitur“ ^{*}), այժմ էլ ունի նոյն նշանակութիւնը:

Հիւանդութեան նշանների բժշկութիւն:

Իւրաքանչիւր հիւանդի համար ամենածանր և անախորժ երևոյթները այն նշաններն են, որոնք ուղեկցում են նրա հիւանդութեանը: Առհասարակ նա ոչ մի գաղափար չունենալով հիւանդութեան էութեան մասին, պահանջում է միայն թեթևացնել

*) «Ո՛վ լաւ որոշել հիւանդութիւնը, նա լաւ էլ կը բժշկուի»:

կամ ոչնչացնել, օրինակ՝ իր հազը, ջերմը, ցաւը, լուծողութիւնը, ամբողջ մարմնի ջրակալելը և այլն: Հիւանդի համար ոչ մի նշանակութիւն չունին օրգանիզմի այն փոփոխութիւնները, որոնք առաջացնում են վերոյիշեալ նշանները, որովհետև նրանք աննկատելի են մնում նրա համար: Հիւանդը պահանջում է, որ բժիշկը ոչնչացնէ կամ թեթեւացնէ այդ արտաքին՝ իրան տանջող երեւոյթները և եթէ այդ յաջողվում է, նա շատ գոհ է և ուրախ:

Այդ տեսակէտից զանազան դեղերը մեծ նշանակութիւն ունին մանաւանդ այժմ, երբ գեղազործութեան շնորհիւ մենք բազմաթիւ լաւ միջոցներ ունինք այդ նշանների դէմ: Սակայն նշանական բժշկութիւնը դրանով միայն չի սահմանափակվում: Շատ անգամ հիւանդը միմիայն շնորհիւ նշանական բժշկութեան ազատվում է իրան սպառնող մահից: Բացի դրանից անագին նշանակութիւն ունի նաև նշանական վիրաբուժական օգնութիւնը: Երբ, օրինակ՝ թունաւորուածին, կամ հիւանդին, որին սրտի ուժընկէցութիւն է սպառնում, դեղերի շնորհիւ նորից կեանք են տալիս, երբ խզուկից (крупъ) խեղդող երեխայի ինտուբացիայի կամ շնչափո-

ղատութեան (трахеотомія) շնորհիւ ազատում են մահից, այն ժամանակ ամեն մէկին հասկանալի է դառնում այդպիսի բժշկութեան անագին նշանակութիւնը:

Բժշկի երրորդ գործողութիւնը ղիէտետիկ--առողջապահական բժշկութիւնն է, որ այժմ չափից դուրս մեծ, մինչև անգամ գերակշռող նշանակութիւն ունի:

Յայտնի է, օրինակ՝ որ շատ անգամ, երբ բժշկի մօտ են գալիս սրտի հիւանդութիւն ունեցողներ՝ հաւասարակշռութեան խանգարումներով, բաւական է պատուիրել նրանց՝ պառկել անկողնում, համապատասխան դիէտա պահել, կրճատել խմելիքը, և նրանց մարմնի ջրակալութիւնը շատ անգամ առանց որևէ դեղերի անհետանայ:

Դիէտետիկ--առողջապահական բժշկութիւնն աշխատում է ամեն մի հիւանդութեան ժամանակ նպատակայարմար դիէտա նշանակել և այնպիսի առողջապահական պայմաններ ստեղծել, որ ըստ կարելոյն հիւանդութիւնը հեշտ և առանց դժուարութիւնների անցնի: Քուլէշի ժամանակ, օրինակ՝ յաճախ կարող է երիկամների բորբոքումն առաջ գալ և բժիշկները դրա առաջնաւնելու համար հիւանդին երեք շաբաթ շա-

րունակ անկողնում են պահում և ջերմն անց-
ներուց յետոյ օրը երկու անգամ տաք վան-
նաներ (28°) ընդունել տալիս: Բացի դրանից
նաև համապատասխան (կաթնային) դիէտա
են նշանակում: Կան շատ հիւանդութիւններ,
որոնց ժամանակ չափից դուրս փասակար,
մինչև անգամ վտանգաւոր է գրգռիչ ուտե-
լիքներ ու խմելիքներ գործածելը, ծանր ֆի-
զիքական աշխատանքը ևայլն: Ի՞նչ հետևան-
քի կարող է հասնել բժշկութիւնը, եթէ այդ
գիէտեստիկ — առողջապահական կանոնները
աչքի առաջ չառնուեն: Թէ որքան մեծ նշա-
նակութիւն ունի այդպիսի բժշկութիւնը, հա-
սարակութիւնն ինքը շատ լաւ է հասկացել.
հիւանդը շատ անգամ ինքը հարցնում է բը-
ժըշկին՝ թէ ի՞նչ ուտեմ, ի՞նչ խմեմ, ի՞նչպէս
պահեմ ինձ ևայլն:

Բժշկի չորրորդ գործողութիւնը — հոգե-
բուժութիւն է, որ կատարվում է կամ բոլո-
րովին աննկատելի կերպով՝ թէ հիւանդի և
թէ բժշկի համար, և կամ ներշնչման միջոցով:
Հոգեկան հիւանդութիւնների մեծամասնու-
թիւնը բժշկվում է համարեա միմիայն հոգե-
բուժութեան շնորհիւ: Կարճ ասած՝ այդ այն
բժշկութիւնն է, որ շատ անգամ հասարակ
ժողովուրդը վերագրում է, օրին. սուրբերի,

զանազան կախարդութիւնների ևայլն գօրու-
թեանը: Այդ այն հաւատն է, որ տածում է
հիւանդը գէպի այս կամ այն բժիշկը: Որքան
մեծ է այդ հաւատը, այնքան մեծ է և հո-
գեբուժութեան նշանակութիւնը:

Բժշկականութիւնը, ինչպէս տեսանք,
այժմս այնպիսի հետազօտութեան ձևեր ու-
նի, այնպէս է բացատրում հիւանդութիւնների
մեծամասնութեան ծագումն ու պատճառները
և այն փոփոխութիւնները, որոնք կատարվում
են օրգանիզմում հիւանդութեան շնորհիւ, որ
յաճախ զարմանք և պատկառանք է առա-
ջացնում հիւանդների մէջ: Սակայն չնայած
դրան, մենք շատ անգամ զանազան խոչըն-
դոաների ենք հանդիպում, որովհետև ժամա-
նակակից բժշկականութիւնը տալով մեզ դի-
տութիւն և որոշ ամփոփումներ, օրէնքների
նշանակութիւն չունի և հասկանալի է թէ
ինչո՞ւ: Ամեն մի հիւանդ իր առանձնայատ-
կութիւններն ունի, որոնք՝ ինչպէս կը տես-
նենք, կախուած են զանազան պատճառներից,
և իզուր չէ, որ բժիշկները երկար դիտողու-
թիւններից յետոյ եկել են հետևեալ եզրա-
կացութեան. չկայ հիւանդութիւն, այլ կայ
հիւանդ օրգանիզմ. հարկատը է բժշկել նշ
թէ հիւանդութիւնը, այլ հիւանդ օրգանիզմը:

Յայտնի է, որ միևնույն հիւանդութիւնից մէկը մեռնում է, միւսն առողջանում, մէկը շուտ է մեռնում, միւսն՝ ուշ և այլն:՝

Գոյութեան կռուի մէջ մարդ կամ յաղթող է հանդիսանում և յարմարվում է գոյութեան համար, կամ յաղթվում է, հիւանդանում և մեռնում իրան շրջապատող միջավայրի ազդեցութեան տակ: Այստեղ նախ և առաջ մեծ նշանակութիւն ունի ժառանգականութիւնը. երեխաները ժառանգում են ծնողների լաւ կամ վատ մարմնակազմութիւնը, նրանց հիւանդութիւնները, երբեմն էլ արամագրութիւն դէպի այս կամ այն հիւանդութիւնը: Հասկանալի է, որ գոյութեան կռուի մէջ կը յաղթուեն և կը կորչեն նրանք, որոնք թոյլ են աշխարհ եկել:

«Հայրը որևէ (թոքերի, սրտի) տեսական հիւանդութիւն ունի, բայց ապրում է մինչև ծերութիւն:

Նրա որդիքը կամ մեռնում են մանկութեան հասակում, կամ հիւանդանում այդ ժամանակ և մեռնում դեռ ևս ջահէլ հասակում:

Օրգանիզմի ստացական խանգարումը երկար ժամանակ հաւասարակշռվում է ուժեղ գործարաններով:

Օրգանիզմ

կարող հաւասարակշռուել և օրգանիզմը շուտով քայքայվում է, երբ բոլոր գործարանները ծնունդից թոյլ են:

Եթէ գործարաններից մէկը փչացած է, իսկ միւսները՝ ուժեղ, հաւասարակշռութիւնը երկար ժամանակ պահպանվում է, հակառակ դէպքում օրգանիզմը ոչնչանում է: (Օտորոսմոլ):

Յայտնի է, օրինակ՝ որ սիֆիլիսոտ հայրը կարող է մինչև խորհին ծերութիւն ապրել, այն ինչ նրանից ծնվում են կամ մեռած և կամ թոյլ ու հիւանդոտ երեխաներ, որոնց կեանքն առհասարակ շատ կարճատև է լինում, և միայն տարիներ անցած կարող են քիչ թէ շատ առողջ երեխաներ ծնուել: Բաւական է մինչև անգամ որևէ թեթև հիւանդութիւն, որպէսզի վերջանայ նրանց գոյութիւնը:

«Միևնույն ընտանիքի մէջ յաճախ տարբերութիւն ենք տեսնում քոյրերի և եղբայրների միջև. մէկը պահպանում է իր հաւասարակշռութիւնը, առողջ է, միւսը հիւանդանում է գանազան հիւանդութիւններով: Այդ կախուած է լինում ի հարկէ ծնողների հասակից և առողջութիւնից՝ սաղմնաուութեան և յղութեան ժամանակ, հօր կամ մօր գերա-

կշռող ազդեցութիւնից, պապի ժառանգական յատկութիւնների փոխատուութիւնից կայն, միայն թէ պայմանների համեմատ, և միջավայրի զանազանութիւնից, որտեղ նրանք ապրում և գործում են: Նայելով միջավայրի առանձնայատկութիւններին՝ գործարաններից միջանիսն աշխատում են աւելի, միւսները քիչ. թեթև աշխատանքի ժամանակ գործարանի թուլութիւնը կարող է թագնուած մնալ, իսկ ծանր աշխատանքի ժամանակ այդ թուլութիւնն արտայայտվում է ֆունկցիայի խանգարումով: (Օստրոումով):

Այդպիսով՝ կարծում ենք, հասկանալի է այն նշանակութիւնը, որ տալիս են ժառանգականութեան: Օրգանիզմի ժառանգական յատկութիւններից է կախուած յաճախ այն հարցը, թէ օրգանիզմը՝ այս կամ այն հիւանդութեան հետ կոուելիս ապրելու է թէ՞ մեռնելու: Որքան վատ են այդ ժառանգական յատկութիւնները, այնքան էլ հեշտ է յաղթվում օրգանիզմը: Բացի ժառանգականութիւնից այստեղ մեծ նշանակութիւն ունին կեանքի պայմանները, հասակը, հիւանդութեան ոյժն ու աստիճանը, նրա ժամանակը կայն: Մանաւանդ ուշադրութեան արժանի է դրանցից առաջինը—կեանքի պայ-

մանները: Պրոֆ. Էրիսմանն ասում է, որ պրոֆեսսիօնալ պարապմունքները որոշ ազդեցութիւն ունին մարդու ֆիզիքական զարգացման, այն է՝ հասակի, կրծքի լայնութեան, մարմնի ծանրութեան վրայ կայն, և որ այդ պարապմունքներից միջանիսը շատ անբարեյաջող հետեանքներ են տալիս: Դրանով է բացատրվում, որ միջանի պրոֆեսսիաները տալիս են մահացութեան բաւականին մեծ տոկոս:

Բացի դրանից վատ կամ լաւ կեանքի պայմանները—աչքի առաջ ունենալով բնակարանը, ապրուստը, աշխատանքի տեսակն ու քանակութիւնը,—մեծ նշանակութիւն ունին հիւանդութեան ընթացքի վրայ: Որքան վատ են այդ պայմանները, այնքան դժուար է հիւանդի համար կոուել հիւանդութեան դէմ: Եթէ, օրինակ՝ թոքախտով հիւանդը,—որին անհրաժեշտ են մաքուր օդ, լաւ բնակարան, առողջ ու առատ սնունդ,—զուրկ է դրանցից, նա չի կարող երկար կոուել հիւանդութեան դէմ, աւելի ևս դժուար կը լինի նրան յաղթելը: Միւս կողմից եթէ յօդացաւ ունեցողը շարունակի ապրել խոնաւ և ցուրտ բնակարանի մէջ, նա երբէք չի կարող ազատուել այդ հիւանդութիւնից: Դժբաղդաբար

ժամանակակից կեանքն ստիպում է մեծ մասամբ՝ բժշկութեան տեսակէտից բոլորովին հակառակ պայմանների մէջ ապրել և այդպիսով որոշ չափով ոչնչացվում է բժշկութեան նշանակութիւնը:

Մենք արդէն գիտենք, թէ որքան ուժեղ է օրգանիզմը, այնքան ևս հեշտ է կովում հիւանդութեան դէմ: Այստեղից հասկանալի է և հասակի նշանակութիւնը. երեխաներն ու ծերունիները առհասարակ աւելի հեշտ են յաղթվում հիւանդութեան ժամանակ, քան չափահասները: Օրինակ՝ թոքերի բորբոքման ժամանակ որքան կասկածելի է առաջինների նախազիտութիւնը (прогностика), ընդհակառակը՝ նոյնքան էլ լաւ է վերջիններինը:

Միևնոյն հիւանդութիւնը կարող է թեթեւ և սաստիկ լինել ոչ միայն այս կամ այն անհատի համար, այլև այս կամ այն ժամանակ: Դրա ապացոյցը վարակիչ հիւանդութիւնների համաճարակն է, որ երբեմն քիչ դոհեր է տանում, երբեմն ընդհակառակը՝ չափից դուրս շատ, նայելով համաճարակի ուղիին: Բացի դրանից ուշադրութեան արժանի է հիւանդութեան ժամանակը: Միևնոյն չէ, թէ հիւանդը երբ է դիմում բժշկին: Սիֆիլիսը երբ դեռ նոր է, կարելի է բժըշ-

կել. բայց այն այլանդակութիւնները, որոնք արդէն գոյացել են, մնում են անբուժելի: Թորախան իր զարգացման սկզբին կարող է բժշկուել (կանգ առնել), բայց երբ սկսուել է թոքերի ոչնչացումը—գոյացել են խորշեր, նա արդէն անբուժելի է: Սուր հարբուխը բուժելի է, տևողականը ընդհակառակը՝ մնում է անբուժելի, կամ շատ դժուար է բժշկվում:

Ահա այդ բոլոր հանգամանքներն աչքի առաջ ունենալով մենք կը խուսափենք այն՝ ըստ երևոյթին անհասկանալի փաստից, թէ ինչո՞ւ մէկը հիւանդանում է, միւսը ոչ, ինչո՞ւ միևնոյն հիւանդութիւնից մէկը մեռնում է, միւսն առողջանում, մէկը շուտ է առողջանում, միւսն՝ ուշ: Բժիշկը միայն շատ քիչ գէպքերում է պատասխանատու հիւանդութեան ելքի համար. իսկ մեծ մասամբ փրկել հիւանդին, աւելի ևս վնասել նրան, նա չի կարող:

Ս.մեն մի բժշկի շատ լաւ յայտնի է՝ դեռ ևս 2000 տարի առաջ Հիպոկրատի արտասանած խօսքերը. „primum ne noceas“ *): Վերևում մենք ցոյց տուինք, որ բժիշկն առհասարակ օգնութեան է հասնում բնութեան

*) «Ա.մե.ից առաջ Հիպոսես»:

և որ միքանի դէպքերում միայն՝ ճիշտ որ նա փրկում է հիւանդին մահից: Այսպէս թէ այնպէս՝ բժշկուելու համար հարկաւոր է որ բժիշկը գիտենայ, թէ ինքն ինչ հիւանդութեան հետ գործ ունի. հարկաւոր է դեռ որոշել հիւանդութիւնը: Հիւանդութեան որոշումը կարևոր է և անհրաժեշտ թէ հիւանդի և թէ շրջապատողների համար: Եթէ, օրին. մէկը սիֆիլիսով հիւանդանում է և բժիշկը չի կարողանում որոշել նրա հիւանդութիւնը, կամ բոլորովին սխալ է որոշում, դրա հետևանքը չափից դուրս ծանր է լինում ոչ միայն հիւանդի, այլև նրա շրջապատողների համար, որոնց նա անդիտակցաբար վարակում է: Յայտնի է, օրին. թէ սրբան մեծ նշանակութիւն ունի թորախտի վաղօրօք որոշումը: Բոլոր սուր վարակիչ հիւանդութիւնների որոշումը, ինչպէս՝ խօլերա, ժանտախտ, քուրթէշ, աիֆ, կայն, թէև առանձին նշանակութիւն չունի հիւանդութեան բժշկութեան համար, բայց առողջապահական տեսակէտից չափից դուրս կարևոր է: Մենք արդէն գիտենք, որ բժշկականութեան զարգացման հետ միասին զարգանում էին և հետազօտութեան եղանակը: Հիւանդութիւնը որոշելու համար բժիշկները ղեկավարվում են

այս կամ այն օբեկտիւ և սուբեկտիւ նշաններով: Եթէ, օրին. մարդ միքանի օր թոյլ է զգում իրան, ախորժակ չունի, քունն անհանգիստ է, տաքութիւն ունի, փայծաղը մեծացած է և վրան բաց-վարդագոյն ցաներ կան, որոնք անհետանալով են մատով սեղմելիս կայն, մենք ենթադրում ենք, որ այդ փորահարինք է: Կուրծքը թղթիկացնելով ու ականջելով—ուշադրութեամբ լսելով, ինչպէս նաև քիմիկո-բակտերիոլոգիական հետազօտութիւնների միջոցով մենք շատ անգամ որոշում ենք այն փոփոխութիւնները, որոնք կատարվում են ներքին օրգաններում, բայց բոլոր դէպքերում միմիայն մօտաւորապէս:

Պէտք է ասել, որ ախտորոշումն այնքան էլ հեշտ չէ: Շատ անգամ հարկաւոր են օրեր, շաբաթներ, որպէսզի կրկնակի դիտողութիւնների շնորհիւ կարելի լինի որոշ եզրակացութեան դալ. էլ չենք ասում այն դէպքերի մասին, որոնք կամ անյայտ են մնում, կամ հիւանդութիւնը պարզվում է միմիայն մահից յետոյ: Վերցնենք, օրին. փորահարինքը. մեծ մասամբ միքանի օրից է յաջողվում որոշել այդ հիւանդութիւնը: Բայց միւս կողմից սրբան հիւանդութիւններ կան, որ կարելի է խառնել իրար հետ, մանաւանդ երբ

նրանց բնորոշ գծերը դիմակաւորվում են զանազան բարդութիւններով: Ահա թէ ինչ է գրում Chantemesse-ը. «Կարելի է ասել՝ չկայ այնպիսի ջերմային հիւանդութիւն, որ որոշ մոմենտում կարելի չլինէր իբրև փորահարինքի սկիզբն ընդունել: Ամենից յաճախ այդպիսի սխալների առիթ է տալիս գումը (гриппъ), որքինային ջերմը (մրմրնջուկ—герпетическая лихорадка), սուր ցաները և զանազան սոսորդատապերը (жаба)... Ստամոքսի և աղիքների խանգարման միջանի ձևերը կարելի է փորահարինքի տեղ ընդունել... Յաճախ փորահարինքի սկզբին նեարդային կանանց մէջ երևում են—ործկունք, գլխացաւ, ծոծրակի կարկամութիւն. մի խօսքով՝ նշաններ, որոնք բնորոշ են ուղեղապատեանի մզնքատապի (meningite) բորբոքման համար»:

Միմիայն մանրամասն, ուշադիր և բազմակողմանի հետազօտութիւնը կարող է բըժըշկին զանազան սխալներից ազատ պահել: Բայց այդ, ինչպէս ասացինք, երբեմն այնքան էլ հեշտ չէ. պատահում են այնպիսի բարդ դէպքեր, որ կամ անկարելի է և կամ յաջող դէպքում զանազան տեսակ գուշակելի բժշկութիւնից յետոյ միայն (ex juvantibus

et nocentibus) կարող ենք որոշել հիւանդութիւնը: Վերցնենք, օրին. գլխացաւը, որ, ինչպէս յայտնի է, զանազան սուր և յարատեւ հիւանդութիւնների ուղեկից կարող է լինել: Եթէ այդ գլխացաւի պատճառը զրժուար է որոշել, իսկ պատահմամբ *) նշանակուած հակասիֆիլիսային բժշկութիւնը ոչնչացնում է նրան, մենք իրաւունք ունինք ենթադրելու, որ այդ գլխացաւը սիֆիլիսի հետևանք էր: Բացի այդ տեսակ զրժուարութիւններից, երբեմն մենք հանդիպում ենք այնպիսի անակնկալների (սիւրպրիզների), որ բժշկականութիւնը մեզ չի կարող բացատրել:

Մի խօսքով՝ մեր առաջ գրուած են սահմաններ և հուշակաւոր վիրխովե իրաւունք ունէր ասելու. «Ճիշտ դիագնօզ (ախտորոշումն) մենք դնում ենք միմիայն դիահատութեան ժամանակ»: Վերջացնելով բժըշկականութեան զարգացման պատմութիւնը, ցոյց տալով այն ահագին առաջադիմութիւնը, որ նա արել է XIX-րդ դարում, մենք չենք կարող մոռանալ Վիեննայի յայտնի կլինի-

*) Պատահմամբ ենք ասում, որովհետև երբեմն չէ խմայվում, թէ արդեօք հիւանդն ունեցի՞լ է սիֆիլիս:

ցիստ Նոթնագէլի խօսքերը: Ընդունելով այն՝ որ բժշկականութիւնը այժմս արդէն մեծ առաջադիմութիւն է արել և որ ապագայում էլ դեռ շատ առաջ է գնալու, նա ասում է:

«Սակայն չնայած դրան մենք պէտք է համեստ մնանք: Ամեն մի մարդկային կեանք, որ հանգչում է վաղօրօք, ամեն մի առանձին հիւանդ, որ ծառայում է անկողնին և իր ողորմելի գոյութիւնը մի կերպ քաշ է տալիս, յիշեցնում է մեզ, որ մեր արուեստի առաջ դրուած են որոշ սահմաններ. իսկ ամենից ցաւալին այն է, որ այդ որոշ սահմաններից երբէք չենք անցկենալու, երբէք չենք կարողանալու առաջնորդուել կենսական պրօցէսաներով: Մենք հնարաւորութիւն ունինք միայն շատ կէտերում լայնացնել մեր գործունէութեան ասպարէզը: Ո՛րքան էլ դանդաղ առաջ գնանք, որքան էլ յաճախ և շատ լինին մեր հիասթափումները, դարձեալ մեզ պէտք է զրգուէ անդադար դէպի առաջ ձգտելու այն գիտակցութիւնը, որ ամեն մարդու ամենաարժանաւոր խնդիրը՝ յօգուտ մարդկութեան ծառայելն է»:

Գ Լ Ո Ի Խ Գ

Հասարակութիւն և բժիշկներ:



Հիմա՝ երբ մենք ծանօթացանք բժշկականութեան զարգացման, բժշկութեան սահմանների հետ, աւելորդ չի լինիլ միքանի խօսք էլ ասել, թէ հասարակութիւնն ինչպէս է նայում բժշկականութեան վրայ և ինչ է պահանջում նրա ներկայացուցիչներից:

Անկասկած հասարակութիւնը չափից դուրս մեծ պահանջներ է անում բժիշկներից. նա փրկութիւն է սպասում նրանցից մինչև անգամ այն ժամանակ, երբ նրանք արդէն անկարող են: Դրա պատճառը գուցէ մասամբ հէնց ինքը բժշկականութեան զարգացումն է և զլիսաւորապէս այն, որ հիւանդն անպատելի հակումն ունի դէպի առողջութիւնն ու կեանքը: Առողջութիւնը մարդու ամենաթանկազին գանձն է. նրա կորուստը ամենազգալին է մարդու համար: Եւ ուրեմն այդ կորուստը վերադարձնելու պահանջը պէտք է ամենասաստիկը լինի: Հիւանդը ցանկանում է շուտով առողջանալ, այդ հասկանալի է.

նա նոյնիսկ չի ուզում լսել, որ բժիշկը մեծ մասամբ չի կարող կրճատել հիւանդութեան ընթացքը: Եւ եթէ հիւանդութիւնը քիչ թէ շատ երկար է տևում, հիւանդն սկսում է մեղադրել բժշկին, կորցնում է իր հաւատը դէպի նա և դիմում է ուրիշին:

Հասարակութիւնը հիւանդութիւնների մասին գաղափար չունենալով՝ շատ անգամ դեկավարվում է հիւանդութեան նշաններով. «Ան հագում էր, հրաւիրեցին X բժշկին և միքանի օրից յետոյ հիւանդը լաւացաւ—դեղը դանակի պէս կտրեց հիւանդութիւնը.—այն ինչ Y բժիշկը անս մի ամբողջ ամիս է չի կարողանում Բ-ի հազը ընդհատել»:

Անս այդպէս է դատում հասարակութեան մեծամասնութիւնը և «հազի դէմ անկարող» բժշկի վրայ թափվում են զանազան մեղադրանքներ: Բայց մենք վերև բացատրեցինք, թէ ինչ է հազը և կարծում ենք որ հեշտ է հասկանալ, թէ այդպիսի դատողութիւնը միմիայն տգիտութեան պտուղ է: Թէ հասարակութիւնը յաճախ անարդար դատողութիւններ է անում, այդ երևում է հետևեալ օրինակից.

Հրաւիրում են բժշկին հիւանդի մօտ, որ տաքութիւն ունի, հագում է... Ենթադրենք,

թէ թոքերի բորբոքումն է: Բժիշկը ձեռք է առնում նպատակայարմար միջոցներ: Մենք արդէն գիտենք, որ դեղերը վարակիչ հիւանդութիւնների ժամանակ չեն կարող ոչ կանգնացնել, ոչ կրճատել հիւանդութիւնը: Վերջինը իր ընթացքն ունի. դեղերով աշխատում ենք միայն պահպանել հիւանդի ոյժը և ոչընչացնել նրան տանջող նշանները: Առհասարակ թոքերի բորբոքման ժամանակ ջերմը քանի գնում՝ սաստկանում է. դրա հետ միասին ծանրանում է նաև հիւանդի ընդհանուր դրութիւնը. իսկ 5—9-րդ օրն առհասարակ լինում է տաղնապը—կրիզիսը: Հիւանդի շրջապատողները տեսնելով, որ օր ըստ օրէ հիւանդի դրութիւնը վատանում է, ուրիշ բժշկի են դիմում, շատ անգամ առանց առաջինին իմաց տալու: Եթէ երկրորդ բժշկին հրաւիրում են հիւանդութեան 4-րդ օրը, երբ, օրին. 5-րդ օրը լինելու է կրիզիսը, ի հարկէ պէտք է ասեն, թէ այդ բժիշկը վերկեց հիւանդին, այն ինչ առաջինի դեղերից հիւանդը քանի գնաց վատացաւ: Իր մօտիկին, սիրելիին կորցնելը այնքան ծանր է մարդու համար, որ առհասարակ ուզում է անպատճառ առողջացած տեսնել նրան: Այդ պատճառով ոչ միայն մահը, այլ նոյնիսկ

հիւանդի ամեն մի փոփոխութիւնը դէպի վատը գինում է հիւանդի շրջապատողներին բժշկի դէմ: Ահա թէ ի՞նչ է գրում, օրին. վերեսակը:

«...Երկաթուղու մեքենավարը հրաւիրեց ինձ տուն՝ իր հիւանդ երեխայի մօտ... Նրա Յ տարեկան տղայի նշագեղծի վրայ թարախակոյտ էր գոյացել: Երեխան բախտաւոր էր, նիհար և գունատ. նա անհանգիստ էր և ատամներով սեղմում էր գգալի կոթը, այնպէս որ մեծ գժուարութեամբ կարողացայ նրա սոսորդը գննել: Ես նշանակեցի դեղ. գնալուս հայրը փող մեկնեց ինձ: Սենեակը ողորմելի և աղքատ էր, երեխաները շատ. ես մերժեցի: Նա յարգանքով և շնորհակալութեամբ ճանապարհ դրաւ ինձ: Հետևեալ երկու օրը երեխան շարունակում էր ջերմել, սոսորդի ուռոյցքը մեծանում էր, շնչառութիւնը գժուարանում էր. ես յայտնեցի ծրնողներին թէ բանը ինչու՞մն է և առաջարկեցի կտրել թարախակոյտը:

— Ի՞նչպէս կտրել բերանի մէջ, — հարցրեց մայրը, բարձրացնելով յօնքերը:

«Ես բացատրեցի, որ այդ օպերացիան բուրորովին անվտանգ է:

— Ո՛չ, ո՛չ. ես համաձայն չեմ այդ բա-

նին, — արագ և վճռականապէս պատասխանեց մայրը:

«Իմ բոլոր համոզմունքներս ու բացատրութիւններս անօգուտ մնացին:

— Ես այնպէս եմ կարծում, որ այդ Աստծու կամքն է, — ասաց հայրը:

— Եթէ Աստուած չի կամեցել, միևնոյն է, կը մեռնի, եթէ կտրէք էլ: Այսպէս թոյլ էակը ի՞նչպէս կարող է դիմանալ օպերացիային:

«Ես սկսեցի սրսկել երեխայի բուկը:

— Այժմա ինքն արդէն բաց է անում բերանը, — տխուր ձայնով արտասանեց հայրը:

— Թարախակոյտը, երևի, այսօր կը պատուրի, ասացի ես. հսկեցէք, որպէսզի երեխան քնած ժամանակ չխեղդուի թարախով: Եթէ դրութիւնը վատանայ, ինձ կանչեցէք: Ես դուրս եկայ խոհանոց. հայրը շտապեց եկաւ վերարկուս բռնելու:

— Էլ չգիտե՛մ, պարոն բժիշկ, թէ ինչպէս շնորհակալութիւն յայտնեմ ձեզ, — ասաց նա. — կտրելի է ասել որ, ուղղակի պարտաւորեցնում էք մեզ յաւիտեան:

«Գալիս եմ միւս օրը և խփում գանգակը: Գուռը բաց է անում մայրը՝ արտասուած, գունատ. նա աչքերով խեթեց ինձ:

— Ի՞նչպէս է ձեր որդին, հարցրի ես:
«Նա չպատասխանեց, մինչև անգամ յետ
չնայեց:

— Մեռնում է, — գսպուած արտասանեց
անկիւնից մի ինչ-որ պառաւ:

«Ես հանեցի վերարկուս և մտայ սենեակ:
Հայրը նստած էր մահճակալին, նրա ծնկնե-
րի վրայ պառկած էր գունատ երեխան:

— Ի՞նչ է, շատ վատ է, հարցի նրան:

«Հայրը սառը և անտարբեր հայեացք գը-
ցեց ինձ վրայ:

— Էլ չգիտեմ, թէ ի՞նչպէս ապրեց մինչև
հիմա, — ահամայ պատասխանեց նա. — մինչև
ձաշ կը մեռնի:

«Ես վերցրի երեխայի ձեռը և շօշափեցի
գարկերակը:

— Ամբողջ գիշեր քթից և բերանից թա-
րախ էր վազում, շարունակեց հայրը. — եր-
բեմն բոլորովին խեղդվում, կապուտկում և
չուում էր աչքերը: Կինս սկսեց լաց լինել,
մին-մին ցնցել նրան:

— Մօտեցրէք երեխային լուսամտին՝ շըն-
չափողը նայելու, ասացի ես:

— Էլ ինչո՞ւ չարչարել նրան, ասաց բար-
կացած մայրը, ներս մտնելով: Թողէք հան-
գիստ մնայ:

— Ի՞նչպէս չէք ամաչում, բարկացայ
վրան. — մի փոքր միայն վատացաւ և դուք
արդէն ձեռքներդ ծալեցիք ու յուսահատուե-
ցիք՝ ենթադրելով թէ կը մեռնի, մինչդեռ
երեխան դեռ այնքան էլ վատ չէ:

«Սոսորդի ուռոյցքը բաւականին իջել էր,
բայց երեխան սաստիկ մաշուած էր և թոյլ:
Ես ասացի ծնողներին, որ ամեն ինչ լաւ է
գնում և երեխան կըսկսի առողջանալ:

— Տայ Աստուած, — կասկածանքով ծիծա-
ղեց հայրը. — Իսկ ես այնպէս եմ կարծում,
որ վաղը դուք նրան կենդան չէք տեսնիլ:

«Ես դեղատոմս գրեցի, բացատրեցի թէ
ինչպէս տալ դեղը և վեր կացայ, ասելով՝

— Ցատկու թիւն:

«Հայրը հազիւ արժանացրեց ինձ պատաս-
խանի: Ոչ ոք չեկաւ ինձ ճանապարհ գցելու:

«Ես վրդովուած դուրս եկայ: Ի հարկէ
նրանց վիշտը շատ օրինաւոր և հասկանալի
էր. բայց ես ինչո՞վ արժանացայ այդպիսի
վերաբերմունքի դէպի ինձ: Նրանք տեսնում
էին, թէ ինչպէս ուշադիր էի դէպի իրանց
երեխան. գոնէ շնորհակալութեան մի խօսք:
Եւ ես ցնորքների մէջ միամտօրէն երեւա-
կայում էի այդպիսի դէպքեր նաև հետևեալ
կերպով. — հիւանդը մեռնում է, բայց մերձա-

ւորները տեսած լինելով, թէ ինչպէս եռանդով և անաչառ էի վերաբերվում դէպի նա, ինձ սիրով ու երախտագիտութեամբ են ճանապարհ դնում:

«Ձեռն ուզում, հարկաւոր էլ չէ: Այլևս չեմ գալ սրանց մօտ», վճռեցի ես մտքումս:

«Հետևեալ օրը ես պէտք է գործ դնէի ամբողջ կամքիս ոյժը, որպէսզի ստիպէի ինձ զնալ հիւանդ երեխային տեսնելու: Չանգը խփելիս գայրոյթիցս գողում էի՝ պատրաստ լինելով տեսնելու անմիտ ու ինձ անարժան ատելութիւնը այն մարդկանց կողմից, որոնց համար արի ամեն բան, ինչ որ կարող էի:

Դուռը բաց արաւ մայրը՝ վարդագոյն, բաղդաւոր: Մի ակնթարթ տատանուելուց յետոյ, յանկարծ նա բռնեց ձեռս և պինդ սեղմեց: Տիկինը լաւ և հաճելի երես ունէր. այդ ինձ զարմացրեց, որովհետև առաջ ես այդ բոլորովին չէի նկատել: Երեխան իրան շատ լաւ էր զգում, ուրախ էր և ուտել էր ուզում... Ես հեռացայ՝ ուղեկցած հօրն ու մօր ջերմ շնորհակալութիւններով: Այդ դէպքը ինձ պարզ հասկացրեց, որ եթէ քեզանից փրկութիւն են սպասում իրանց մօտիկ անձնաւորութեան համար և դու չես անում, այդ բանը չեն ներիլ, որքան էլ դու

ուզած և աշխատած լինիս նրան ազատելու»... Ի՞նչպիսի տարբեր վերաբերմունք, ինչպիսի փոփոխութիւն ենք տեսնում դէպի միևնոյն անձնաւորութիւնը, որ միշտ անփոփոխ էր դէպի հիւանդը. և այդ բացառութիւն չէ: Ամեն մի բժիշկ կարող է իր կեանքից բազմաթիւ նոյնանման օրինակներ բերել: Սակայն միայն հասարակութեան անարդար վերաբերմունքը չէ. օրէնքը ևս խիստ է դէպի բժիշկը:

Եթէ, օրինակ՝ բժիշկը առանց որևէ յարգելի պատճառի չգնայ հրաւիրուած հիւանդի մօտ, օրէնքը պատժի է ենթարկում նրան, որովհետև նա անմարդասէր է գտնուել: «Անտուն-անտէր մարդը կարող է սառել հարուստի բնակարանի մուտքի դռան մօտ, կարող է քաղցից մեռնել հացատան լուսամտի տակ»: (Վերեսայն):

Այդ դէպքում օրէնքը լուռ է մնում: Հացթուխն ու հարուստը պարտաւոր չեն նրան օգնել—մարդասէր լինել: «Բայց երբ բժիշկը, օրուան աշխատանքից և անքուն անցկացրած նախկին գիշերից յոգնած, հրաժարուի հիւանդի մօտ գնալու, այն ժամանակ «անմարդասէր բժշկին» օրէնքը բանտ է նստեցնում»: (Վերեսայն):

Արևմտեան Եւրոպայում, այն է՝ Գերմանիայում, Ֆրանսիայում և այլուր վաղուց արդէն վերացած են այն օրէնքները, որոնք պարտաւորում էին բժշկին գնալ հիւանդի մօտ, հէնց որ կանչեն: Մեզ մօտ շատ անգամ երբ բժիշկը չի կարողանում գնալ հիւանդի մօտ, կամ միքիչ ուշանում է, մեծ անբաւականութիւն է առաջացնում և մի երկու այդպիսի դէպք բաւական է, որպէսզի այդ բժշկի մասին վատ համբաւ տարածուի:

Մի անգամ Մոսկուայից Թիֆլիզ էի վերադառնում: Կողքիս նստած էր մի գաւառական բժիշկ, որի հետ խօսում էինք առհասարակ բժշկականութեան և ի միջի այլոց գաւառական բժշկականութեան մասին: Ո՞ւմ յայտնի չեն այն ծանրութիւնները, որոնք բարձուած են գաւառական բժիշկներին վրայ: Գաւառական բժշկից օգնութիւն են սպասում ամեն օր՝ յիսուն, հարիւր հիւանդ. նա ստիպուած է յաճախ տասնեակ վերստեր անցնել հիւանդի մօտ գնալու նոյնիսկ բուք ու բորանին: «Նղանակը միմիայն տէրտէրներին և բժիշկներին համար է», ասում է ժողովուրդը: Վերջապէս գաւառական բժշկից պահանջվում է ամեն ինչ, որ մի մարդու ոյժից բարձր է:

Կայարաններէց մէկում վագօն նստեցին երկու ուրիշ մարդ, որոնցից մէկը տաք-տաք հայնոյում էր: Մենք իսկոյն հասկացանք, թէ ում էր հայնոյում և ընդհատեցինք մեր խօսակցութիւնը:

«Այդ անպիտանին միքանի տարի շարունակ հրաւիրում էի և ամեն անգամ հինգ ուրբի էի տալիս: Անամօթն այժմս յանդըրնել է չգալ, որովհետեւ հիւանդը իմ գործակատարն է», այսպէս ասում էր մէկը միւսին և երևում էր, որ երկուսն էլ չափից դուրս զայրացած էին: Մենք հետաքրքրուեցինք և սկսեցինք նրանց հետ խօսել. բանից դուրս եկաւ, որ այդ բժիշկն ապրում է նրանցից միքանի վերստ հեռու. նրա ետեւից մարդ են ուղարկել, նա խոստացել է գալ, բայց չի եկել: Այդ բոլորը շատ լաւ. բայց արդեօք այդ հայնոյող պարոնը բաւական հիմք ունէ՞ր մեղադրելու բժշկին. մի մարդու, որ տարիներին ընթացքում միշտ գնացել է նրա մօտ. ի հարկէ ոչ: Այդ մարդը չէր կամենում հետևողական լինել, չէր ուզում հասկանալ, որ գուցէ բժշկին մի աւելի լուրջ, աւելի սուրբ պարտականութիւն արգելք է հանդիսացել: Իմ ընկերակից գաւառական բժիշկը միքանի օրի-

նակները բերաւ իր կեանքից, երբ նա խոստացած է եղել գնալ հիւանդի մօտ, բայց նրան այդ ժամանակ դժուար ծննդաբերութեան են հրաւիրել... Բացի դրանից այդպիսի դէպքերում կարող են և ուրիշ պատճառներ լինել: Չէ որ բժիշկն էլ մարդ է. նա էլ կարող է հիւանդ լինել, կամ որևէ ընտանեկան լուրջ հանգամանքների շնորհիւ չկարողանայ գնալ: Երբեմն սաստիկ յոգնածութիւնից յետոյ նա կարող է քնած լինել, կամ ճաշում է և միքիշ յետոյ միայն կարող է գնալ: Դժբաղդաբար այդ արդարացի իրաւունքից, այն է՝ հանգստանալ, երբ յոգնած են, ուտել՝ երբ քաղցած են և այլն, գրկուած են միմիայն բժիշկները:

Բժիշկների մասին շատ տարածուած է այն կարծիքը, թէ նրանք արծաթասէր են: Բայց նրանք իրօք մեծ մասամբ արծաթասէր են համարվում միմիայն այն պատճառով, որ վարձատրութիւն են պահանջում իրանց աշխատանքի համար: Սակայն ո՞վ է առանց վարձատրութեան աշխատում և կարելի է արդեօք որևէ դասակարգ ցոյց տալ, որին կարելի լինէր բժիշկներէն աւելի աւաշառ անուանել: Ի հարկէ բժիշկների մէջ կան անհատներ, ինչպէս և ուրիշ դասակար-

գերի մէջ, որոնք թէ արծաթասէր, թէ անխիղճ են. բայց չէ որ առանց պակասութեան մարդ չկայ: Եւ միթէ անարժանօրէն «բժիշկ» իրէպալական անունը կրող քչերը պէտք է ստուեր դցեն անշահասէր և ազնիւ մշակների ամբողջ կօրպօրացիայի վրայ, որոնցից 75% հազիւ հազ է ծածկում իր ընտանեկան համեստ ծախսերը: Ո՛րքան բժիշկներ կան, որոնք խեղճերին ձրի են ընդունում, որքան ձրի բուժարաններ կան նոյն նպատակի համար: Բայց շատ կը գտնէք, օրինակ՝ իրաւաբաններ, որոնք խեղճերի գործը ձրի պաշտպանէին, շատ դերձակներ, կօշկարներ և այլն, որոնք խեղճերի շորերն ու կօշիկները ձրի կարէին:

Հասարակութիւնը միմիայն բժիշկներէ վրայ է յարձակվում, միմիայն նրանց է անմարդասէր, արծաթասէր անուանում: Ի՞նչն է դրա պատճառը. նախ և առաջ գուցէ այն, որ ինչպէս պրոֆէսոր Մորիսովէցն է ասում. «...Մնշուշտ հասարակութիւնը կը կամենար բժիշկներին անշահասէր տեսնել... ո՞չ թէ նրա համար, որ նա չէր ուզի վարձատրել նրանց աշխատանքը, ո՞չ. այլ նա կ'ուզէնար ստեղծել նրանց կուլտ (պաշտամունք), որի մէջ ձօնը կազմէր ո՞չ թէ վար-

ձատրութիւնը, այլ արժանին՝ արժանաւորին»։ Ենթադրենք թէ այդ ճիշտ այդպէս է. բայց չէ՞ որ ինքը բժիշկը և նրա կիներն ու երեխաները օգով չեն կարող ապրել։

Երկրորդ այն՝ որ այստեղ հարցը վերաբերում է հիւանդներին, որոնք կարօտ են բժշկի անյապաղ օգնութեան։ Բայց մի՞թէ միմիայն հիւանդը կարող է անյապաղ օգնութեան կարօտ լինել. իսկ անտուն-անտէր քաղցածը արդեօք իրաւունք չունի նոյնը պահանջել այն հասարակութիւնից, որ իր հիւանդների համար բժիշկներից է պահանջում։ Եթէ մենք հետևողական լինինք, հեշտութեամբ կը հասկանանք որ, այո՛, նրանք—աղքատները ևս իրաւունք ունին. բայց իսկապէս այդպէս չի լինում։

«Օրինակ՝ 20 տարի առաջ Կիւտում հետեւեալ դէպքն է պատահել։ Բժիշկ Պրօցենկօն հրաւիրվում է մի հիւանդի մօտ. նա գննում է նրան, բայց գիտենալով, որ հիւանդը միջոց չունի վարձատրութիւն տալու, հեռանում է, առանց դեղ նշանակելու. բժիշկը դատի և տուգանքի է ենթարկվում ու մի ամիս բանտարկութեան դատապարտվում»։ Բազմաթիւ հասարակութիւնը, որ հաւաքուած էր դատաստանական դահլիճում, ծափահա-

րութիւններով ու կեցցէներով ընդունեց այդ վճիռը։ Բժիշկ Պրօցենկօյի վարմունքը վրդովեցուցիչ էր, այդ մասին վէճ անգամ չի կարող լինել. բայց հետաքրքիր է նաև հասարակութեան հոգեբանութիւնը, որ մեղադրական վճռին ջերմ ծափահարելով, հանգիստ տուն վերադարձաւ։ Յրուելով՝ նա խօսում էր բժիշկների անգութ շահասիրութեան մասին, բայց նրա մտքից անգամ չանցաւ գէթ մի կոպէկով օգնել այն թշուառին, որի համար դատապարտուած էր բժիշկ Պրօցենկօն։ Ես երևակայում եմ, որ այն խեղճը կարող էր արամաբանօրէն և հետևողաբար մտածել, ուստի մօտենալով հասարակութեան անդամներին մէկն ու մէկին ասէր.

— Ինչպէս լսեցիք, դատարանում անհերքելի կերպով հաստատուեց, որ ես խեղճ եմ և միջոց չունիմ վարձատրելու բժշկին։ Հետևապէս հասկանում էք, որ ինձ հարկաւոր է ոչ միայն բժշկուել, բայց և ուտել. իմ երեխաներս նոյնպէս քաղցած են... Ուրեմն նեղութիւն կրէք ինձ երկու-երեք ուրբի տալու։

— Նախ և առաջ, սիրելիս, եթէ դու այդ պահանջում ես, ես քեզ ոչինչ չեմ տալ, պատասխանում է պարոնը, մի փոքր զարմացած

այդպիսի համարձակութիւնից. — իսկ եթէ դու խնդրում ես, լաւ, ես քեզ կրտամ հինգ կողակ իմ հոգուս փրկութեան համար: Վերցրո՛ւ և ասա ինձ համար՝ «յիշեալ լիցիս առաջի անմահ պատարագին Աստուծոյ»:


— Ո՛չ, ես չեմ խնդրում, այլ պահանջում եմ և այն ոչ թէ մի ողորմելի հինգ կողակ, այլ առնուազը երկու-երեք ուրբի. բժշկի այցելութիւնը մօտաւորապէս այդքան արժէ: Իսկ դուք տեսա՞ք, ինչ արին նրան այն բանի համար, որ նա մերժել էր ինձ օգնելու. խօսմ ինքներդ էլ ծափահարում էիք նրա դատապարտութեան համար: Եթէ դուք ինձ չտաք երեք ուրբի, ես ձեզ էլ դատի կ'ենթարկեմ:

Ձայրացած պարոնը ի հարկէ կանչում է ոստիկանին և հասարակութեան ընդհանուր համակրութեան տակ, հրամայում է ոստիկանատուն ուղարկել լրբին: Ահա այդտեղ խեղճն իմանում է, որ չի կարելի միշտ հետևողաբար մտածել, որ անշահասիրութեան բացակայութեան համար կարելի է բանտարկել բժշկին, իսկ բոլոր մնացած մարդիկ անարգել իրաւունք ունին իրանց քսակն ու աշխատանքը իրանց ուզածի պէս կարգադրել: Քաղցից մեռնող մարդուն օգնութիւնից

հրաժարուելու համար նրանց իրաւունք է տրվում միմիայն իր սեպհական խղճի հետ գործ ունենալ և եթէ այդ խիղճը բաւականին ամուր է, նրանք կարող են բարձր պահել իրանց գլուխը և ընդհանուրի համակրանքից օգտուել»: (Վերեսայն):

Բժիշկը շատ լաւ է հասկանում, որ անհրաժեշտ է հիւանդին բժշկել, քաղցածին կերակրել. բայց մինչդեռ քաղցած մարդու կարիքը հոգում է ամբողջ հասարակութիւնը, չունևոր հիւանդին ձրի բժշկելը միմիայն բժշկի վրայ է ծանրացած: Սակայն երբ մերկ ու քաղցած աղքատը ողորմութիւն է խնդրում և շատերը անցնում են՝ առանց նոյնիսկ նրան նկատելու, ո՞վ կը համարձակուի ասելու, որ նրանք անմարդասէր են: Այն ինչ՝ երբ հազար բժշկից մէկը առանց վարձատրութեան չի ուզում աղքատ հիւանդի մօտ դնալ, իսկոյն ամեն կողմից յարձակվում են այդ բժշկի վրայ և «արծաթասէր», «անմարդասէր» անուանում նրան:

Կարծում ենք՝ չենք սխալուիլ, եթէ ասենք, որ ոչ մի դասակարգ այնպիսի անձնուիրութեամբ չի ծառայում հասարակութեան, ինչպէս բժիշկները: Լինելով շարունակ հիւանդների շրջանում, բաժանելով նրանց



ցանն ու վիշաքը, միշտ տանջուելով հասարակութեան անարժան յարձակումներից ու անարդար վերաբերմունքից՝ միակ ցանկութիւնն է օգնութիւն հասցնել նրանց:

Ճիշտ որ՝ «Բժիշկը ճրագ է, որ լոյս է տալիս՝ ինքը վառուելով»:



Յ Ա Ն Կ

Երես

Յառաջաբան. 3

ԳԼՈՒԽ Ա.


Բժշկականութիւն.— Ժողովրդական բժշկականութիւն 5
Գիտական բժշկականութեան զարգացումն. 11

ԳԼՈՒԽ Բ

Ժամանակակից բժշկականութիւնը եւ բժշկական գիտութեան սահմանները . . . 40

ԳԼՈՒԽ Գ

Հասարակութիւն եւ բժիշկներ 65



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Եր.	Տող.	Տպուած է.	Պէտք է լինի.
8	7	հէր+եից փոխադրվում	փոխատրվում
9	«	« (остма)	(астма)
12	1	վէրեից բժշկանութեան	բժշկականութեան
«	5	հէր+եից (դէտա)	(դիէտա)
16	9	վէրեից առաջացնում	առաջացնում է
28	3	հէր+եից թողել ես	թողել են
29	6	« Մօրգացի	Մօրգանիյ
34	7	վէրեից (гангрена), կերցաւը	(гангрена) „анто- новъ огонь“
37	4	« նեխախի	нечехити
46	9	« соли-	сали-
50	1	հէր+եից երեխայի	երեխային՝
51	13	« և	որ
80	5	վէրեից պատարագին	գառին

« Ազգային գրադարան



NL0279340

3 483

Մեր աշխատություններ լոյս են տեսել.

1. Մայր և երեխայ. 40 կ.
2. Բժշկականություն և հասարակություն . . . 25 ռ

Յանկարդները թող գրեն. Тифлисъ, Армянскій базаръ Гост. дв. Манташева № 30
М. Магакьяну և կամ Թիֆլիզի գրականություններին

Գինը է 25 կ.

614

Մ-20